Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման** (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh** (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

**Մեր տվյալները – Наши контакты - Our contacts**

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՎԵՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀՈՒՇԱՄԱՏՅԱՆ-4

***(2014-2017թթ.)***

«Դիզակ պլյուս» հրատարակչություն
Ստեփանակերտ 2020

ՀՏԴ 325
ԳՄԴ 66.5 (5Հ)
Գ 888

*Շնորհակալություն եւ երախտագիտություն*
*գրքի հովանավոր Մարատ Վալերիի Սարգսյանին*

Գրիգորյան Վ.

Գ 888 Հուշամատյան-4/ Վ. Գրիգորյան.- Ստեփանակերտ:
Դիզակ պլյուս, 2020.- 176 էջ:

ԱՀ ԱԿԱՀՄ նախագահ Վերա Գրիգորյանի կողմից կազմվող՝ ԱԿԱ թանգարանի «Հուշամատյան» գրքի չորրորդ այս հատորն ընդգրկում է հուշաթանգարան այցելած մեր հայրենակիցների եւ արտերկրից ժամանած հյուրերի գրառումները. նրանց խոհերն ու կարծիքները, որոնք միաժամանակ կազմակերպության 21-ամյա գործունեության գնահատականներ են եւ ցավն ու հույսն ազգովի կիսելու, միմյանց նեցուկ լինելու բացառիկ օրինակ:

ՀՏԴ 325
ԳՄԴ 66.5 (5Հ)

ISBN 978-9939-1-0999-2

© Վ. Գրիգորյան, 2020

## ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Հուշամատյանը անհայտ կորած ազատամարտիկների թանգարանի գործունեության տարեգրությունն է՝ ստեղծված թանգարանի այցելուների անմիջական ու թարմ տպավորությունների տակ կատարած գրառումներից, անկեղծ գնահատականներից ու զգացմունքների ու տպավորությունների արտահայտություններից: Այդ ամենը հուշաթանգարանի բեղուն գործունեության ճշմարտացի արտացոլանքն են, եթե կուզեք՝ այն մարկանց անաչառ ու անկողմնակալ գնահատանքը, որոնք գրառումներ կատարելիս որևէ այլ պարտավորություն չեն ունենում, բացի Հայրենիքի համար ոչ մի բան չխնայած նվիրյալների հանդեպ ակնածանք, հարգանք ու հիացմունք ապրելու ինքնաբուխ մղումից: Ուրեմն սույն հուշամատյանը նաև հարգանքի ու երախտագիտության տուրք է բոլոր նրանց հանդեպ, ովքեր իրենց օջախն ու ընտանիքը, հարազատներին ու հայրենակիցներին պաշտպանելիս անհայտության մեջ են հայտնվել: Եվ այդ զգացումներն արտահայտող բազմալեզու ու բազմաբովանդակ, հուզումնալից ու հակիրճ գրառումները յուրահատուկ ուղերձներ են ոչ միայն անհայտ կորած ազատամարտիկների հարազատներին՝ լցվելու համբերության անսպառ էներգիայով, որպեսզի մի երջանիկ պահի գրկախառնվեն բոլոր նրանց հետ, ում արդեն քանի տարի անդադրում ու անմար հավատով սպասում են, այլև միջազգային մարդասիրական կազմակերպություններին և ռազմագերիների ու անհայտ կորածների հիմնախնդիրներով զբաղվող շահագրգիռ կառույցներին կամ մարմիններին՝ համատեղելու բոլոր ջանքերը հեռուներում դեգերող մարդկանց իրենց ընտանիքների գիրկը վերադարձնելու նպատակի իրագործման շուրջ:

***Միհր ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***

September 22nd 2014

We warmly congratulate Vera Grigoryan and all who have created this beautiful museum of remembrance of those who have not yet returned. Our hearts break with grief and we pray that soon there will be peace, justice and freedom for all people in this land and region.

And we pray for comfort and peace for those who are still missing and who love them.

Caroline Cox House of Lords and HART.

My 9th visit to Karabakh and many times to here. Our love and our prayers are always with you as you endure pains we cannot imagine. We promise what little we can do... we do for the need of your loved ones to be remembered and be free again.

Father David 22/9/14 Wales, U.K.

Walking around this beautiful museum has been an incredibly moving experience. One cannot even begin to imagine the ongoing pain and suffering of those whose loved ones are missing. This is my first visit to Artsakh but these people will always be remembered by myself and my colleagues.

Kathryn McGonagh 22/9/14 Northern Ireland (UK)

On my first visit to Artsakh I have felt so moved to see how you are so beautifully remembering & keeping hope for those who have not yet been found. It is inspiring to see the Armenian & Azeri sides working together on a common cause. I was particularly moved to be told stories of the torture and atrocities that have been commited against some of those who have been found. I hope that those who have been sighted are found and that some knowledge of their survival gives you hope

Samantha Hudson 22/9/14 - UK

May your important work bear fruit in the reunion ~~with~~ of lost soldiers and their loved ones. – and quickly.

Rob Chudley 22/09/2014 England

Vous avons visité les 2 musées qui évoquent la guerre de 1992–1993 – Ce sont des témoignages émouvants qui montrent la vaillance et la ténacité des arméniens pour libérer leur pays de tout occupant – Pour cela, ils méritent le respect.

Michel-Claude [redacted] Bretagne FRANCE 23/9/2014

23/09/14

VERY POWERFUL MUSEUM ON THE LOSS OF SO MANY THEIR FAMILIES GRIEF CONTINUES, VERY GOOD MUSEUM & MAY PEACE LAST IN THE KARABAKH

LEO LONDON UK

Je voudrai féliciter les organisateurs de ces deux musées. L'Histoire leur sera reconnaissante pour avoir préservé la mémoire de tous ceux qui ont sacrifié leur vie pour l'amour de la patrie et la dignité de leur nation.

Puissent les générations qui suivront apprécier leurs efforts, leur courage et les très nombreux sacrifices consentis par toutes ces familles en deuil.

Avec mon respect & mon émotion bien profonde.

Հուսով եմ, որ բոլոր տղաները կվերադառնան իրենց ընտանիք և մամաներում շատ յուզած կլինեն աչքի լույս արձագանքով:

***Մարի Գեորգի Կարանիան***
***24.09.2014թ.***

[illegible]

25.09.2014թ.

Низкий поклон Вам и огромная благодарность в Вашем деле.

Поздравляю с Днем города Степанакерта!

[illegible] 25.09.2014 г.

[illegible]

[illegible] 2014 25.09

Շատ ցավալի այցելություն ունեցանք, երբ հաճախեցինք այս թանգարանը: Յուզված աշակերտներ ենք, բայց միշտ կը մտածինք, որ մեր յախտանակը լավ էր: Միայն լավ մտածելակերբ կը ունենանք: Այս այցելութիունը ամենիս շատ է ազդէ մեզ, բայց միշտ կը յիշենք և կը մտածենք ամեն զինվորների մասին:

***Գօլսպն ճեմարան***
***25.09.2014թ.***

Низкий Вам поклон за то, что собрали и представили в одном музее столько фактов из истории Карабахской войны.

***г. Саратов***
***26.09.2014г.***


Merci beaucoup pour l'accueil dans ce musée qui temoigne de l'effort de mémoire de cette période. Je reviendrai quand je comprendrais l'Arménien afin de comprendre les subtilités qui m'ont echapées.
Très bonne continuation.
CLÉMENCE ROZENN
[illegible]

Una mostra molto [illegible] [illegible]
[illegible]
[illegible]
ALAIN VADA
[illegible]
ITALIA/FRANCIA



2 October 2014
Zeer indrukwekkend om hier te zijn.
Casper Arnts & Henriëtte van Donselaar, the Netherlands

Interesting exibition, makes me really sad
to see this. Sebastian from Berlin, Germany

A truly amazing, albeit very sad, museum
I was quite overwhelmed even though I'm
English. Love & Peace England.

Վստահ եմ, որ կգա մի գեղեցիկ օր, երբ բոլոր անհայտ կորած քաջ հայորդիները կվերադառնան իրենց հայրական տները, և նրանց մայրերի թախծոտ հայացքները կջերմանան: Եթե անհայտ կորած մեր այդ զավակներից շատերը դեռ ողջ են, թող Տերը նրանց վերադարձնի իրենց ընտանիքներին:

***Լեյտենանտ Լևոն Մկրտչյան՝ 50 սպայի հետ ,***
***6 -րդ պաշտպանական շրջան, 33651 զ/մ***
***05.10. 2014թ.***

Համոզված եմ, որ մի օր մեր անհայտ կորած տղաները կվերադառնան հայրենի օջախ, և բոլորի ընտանիքներում կլինեն ուրախության ու երջանկության արցունքներ: Հավատում ենք և սպասում:

***1-ին պաշտպանական շրջան***
***Լեյտենանտ Գևորգի Արշակյան՝***
***50 սպայի հետ***
***05.10. 2014թ.***

Մենք կասկած չունենք, որ յուրաքանչյուրն, ով այցելում է այս թանգարանը, ներշնչվում է տեղիս ցուցանմուշներով, նկարներով, մեր զինակից ընկերների անուններով…Հպարտ եմ, որ այս քաղաքում կա՛ այս թանգարանը, որը բոլորին հիշեցնում է, թե ինչ ճանապարհներով ենք հասել մեր փխրուն խաղաղությանն ու հետպատերազմյա կյանքի կարգավորմանը:

***Մայոր Մարտիրոսյան՝ 50 սպայի հետ***
***9 -րդ ՊՇ, 59703 զ/մ ՖՊՊ***
***05.09.2014թ.***

Մարդն ազատ է լինում հոգո՛վ՝ ոչ թե ֆիզիկապես… Ես վստահ եմ, որ նրանք ազատ են եւ մտքով՝ տանը:

***Կապիտան Կ. Բաղդասարյան՝ 50 սպայի հետ***
***1-ին ՊՇ 5 ՀԳՄ-ի ՀՀ ԳՕ***
***05.10.2014թ.***

Ընտանիքն սկսվում է ազատ ու անկախ հայրենիքից: Հայրենիքը մի արժեք է, որով մենք եւ ապրում ենք, եւ հպարտանում՝ նրան ազատ ու անկախ տեսնելով: Եթե չունես հայրենիք, ուրեմն ապրելդ անիմաստ է…Այս թանգարանում ես ավելի խոր զգացի, որ հայրենիք ունենալն ու այն պաշտպանելը դժվար գործ է, բայց եւ՝ հպարտություն: Այդ գաղափարի գիտակցումն է ինձ դարձրել սպա, որպեսզի շարունակեմ «հավերժ երիտասարդ մնացած» մեր հայրենասեր տղաների կիսատ թողած գործը: Եվ իմ խղճի առաջ եմ նախ եւ առաջ դա խոստացել …

Ես՝ 4-րդ պաշտպանական շրջանի երիտասարդ սպա Արսեն Սուրենի Գալստյանս իմ և 4-րդ պաշտպանականի մյուս բոլոր հրամանատարների անունից խորը շնորհակալություն եմ հայտնում հուշաքանգարանի հիմնադիր ու նվիրյալ տիկին Վերա Գրիգորյանին:

***Լեյտենանտ Ա. Գալստյան՝***
***50 սպայի հետ***
***05.10. 2014թ.***

Շնորհակալությու՛ն ԱԿԱՀՄ եւ ԶԱՀՄ հուշաքանգարաններն ստեղծած՝ Անհայտ կորած ազատամարտիկ Սպարտակ Գրիգորյանի մայր Վերա Գրիգորյանին և զոհված ազատամարտիկ Գրիգոր Առստամյանի մայր՝ երջանկահիշատակ Գալյա Առստամյանին, որոնց աշխատանքն, իրոք, արժանի է բարձր գնահատականի: Երկու թանգարաններում էլ իշխում է նույն մթնոլորտը. կորստյան ցավի ամոքում՝ տաք ու բարի հիշողությամբ, նաեւ՝ ուղերձ աշխարհին՝ «Պատերազմներին՝ ո՛չ» կարգախոսով: Մենք այստեղ ծանոթացանք այն քաջարի տղաների հետ, որոնց սուրբ արյամբ են գծվել այսօրվա Արցախի սահմանները: Մեզ համար մեծ պատիվ է, որ շարունակում ենք նրանց պայքարը: Գծված սահմանները մեզ համար սրբություն են…

***2-րդ ՊԾ սպա՝***
***լեյտենանտ Դավիթ Ստեփանյան***
***80 զինվորի հետ***
***05.10. 2014թ.***

Համբերություն եմ մաղթում կորստի տեր բոլոր մայրերին, քույրերին, կանանց, տատիկներին…Սուրբ Հոգու մխիթարանքը թող Ձեզ հետ լինի:

***Աննա Պողոսյան***

Համբերություն և անսպառ ջիղ՝ շարունակելու Ձեր Սուրբ գործը:

***Լիրա Մկրտչյան***

Տիկին Վերան ասաց, որ առանց Հայաստանի չկա Արցախ, սակայն առանց Արցախի էլ չկա Հայաստան…

Ճիշտ եք, սիրելի տիկին: Ու ես պիտի ասեմ հետևյալը. Ձեր որդին դեռ տուն չի եկել, որպեսզի մենք էլ տուն ունենանք…

***Ժիրայր Անանյան***
***ՀՀ ԴԻՎ դպրոց***
***2014թ.***

Լավ է, որ պահում եք յոյսը՝ յոյս միր ապագային համար, յոյս միր երազներու համար, ապրէ՛ք, մեր մայրիկներ, ձեր աննկուն պայքարով:

***Արիս Նալճը***
***17.10. 2014թ.***

Անչափ տպավորված եմ: Աստված լուսավորի բոլոր տառապյալներին: Ձեզ համբերություն և շնորհակալություն լավ գործի համար:

***Անի Բաղդասարյան***
***17.10. 2014թ.***

[illegible]

[illegible]

[illegible]

Յոթ Տեր [illegible] համար,

Յոթ Տեր [illegible] համար;

[illegible] Տեր [illegible]

[illegible] [illegible] [illegible]

[illegible]

[signature]

17.10.2014

Անչափ տպավորված եմ: [illegible] թանգարանի [illegible] [illegible] հոգին, [illegible] և իրենց [illegible] գործի համար: Ձեզ համբերություն և շնորհակալություն ձեր լավ գործի համար:

091 477714 — Հարգանքով [illegible]

20.10.2014

22/10/2014 Impressive museum, Thanks for the explaination and the singing of your granddaughters.

Stephan | Uli – Holland/Germany

Խորապես տպավորված ենք հեռանում հուշաքանգարանից…Մենք ողբերգական ճակատագրի արժանացած եւ այս քաջ տղաների շնորհիվ է, որ ապրում ենք ազատ ու անկախ Արցախում: Կփորձենք մեր բոլոր ուժերով պահել ու պահպանել մեզ կտակված հայրենիքը: Արցախը ու Թող այլեւս ու միշտ խաղաղություն լինի հայոց Արցախ աշխարհում:

***Վիկտորյա Բախշյան***
***14.11. 2014թ.***

Մենք՝ արցախահայության այն սերունդն ենք, ով վայելում է ավագների արյան գնով ձեռք բերված անկախությունը, այն սերունդը, որը չպետք է որեւէ բան զիջի ձեռք բերվածից… Տիկին Վերա, Ձեր կատարած աշխատանքը շնորհակալության է արժանի, Դուք դարձել եք հավաքական սփոփանքը այն մայրերի, ովքեր սիրով, կարոտով ու հույսով դեռ սպասում են իրենց որդիներին… Հուսանք, որ կգա այն օրը, երբ աշխարհը ճանաչած կլինի Արցախի Հանրապետության անկախությունը, հանուն որի սխրանքի եւ տառապանքի ուղիներով են անցել Ձեր ու բախտակից շատերի զավակները…

***Ստեփանակերտի***
***արհեստագործական***
***ուսումնարան***
***18.11.2014թ.***

Спасибо за теплый прием.
Терпения и надежды.

***Саша Одынов***
***Москва***
***18.11.2014г.***


アルメニアに来てから、初めてナガルノ-カラバフ紛争を知りました。これだけの人が亡くなった事すら知らなかった事に教養のなさを恥かしく感じました。
まだ完全に解決したわけではないと思うけど、この地に永遠の平和が訪れる事を切に願います。
2014-11-18 水谷高之(TAKA

Այցելելով անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարան, այնպես զգացինք, թե նրանք կենդանի մեր կողքին են՝ նրանց շունչն զգացինք ու հիշեցինք՝ հանուն ինչի են կռվել ու… տառապում անհայտ հեռուներում: Կլինի օր էլ, երբ նրանք կվերադառնան հարազատ օջախները: Եվ նրանց մայրերի արցունքները կլինեն ոչ թե կարոտի, այլ որդուն գրկելու արցունքներ: Տա Աստված, տիկին Վերա, որ շուտ գա եւ քո Սպարտակի՛ն գրկելու այդ օրը…

***Սպեփանակերփի Աշոփ Ղուլյանի անվան թիվ 2***
***հիմնական դպրոցի 2-րդ բ դասարանի դասղեկ***
***Ս. Դանիելյան, աշակերփներ, ծնողներ***
***(34 հոգով)***
***19.11.2014թ.***

Մենք այսօր այցելեցինք Անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարան ու… մեծ տպավորություններով ենք հեռանում այստեղից: Մեզ հետ տանում ենք խորն ու անմոռաց հիշողություններ: Փա՜ռքդ մեծ լինի, հայ զինվոր…

***Ի. Մնացականյան***
***22.11. 2014թ.***



20.11.2014

Good Luck ~

Leaf & 11 Shanghai

Թանգարանից ստացած մեր տպավորությունները խորն են, իսկ վերակենդանացած հիշողությունն՝ այրող. ես պատերազմի ժամանակ անհայտ կորածի թոռ եմ, եւ մեր տան դուռն էլ է «միշտ բաց լինում»… Կարոտով ենք սպասում մեր հարազատների վերդարձին:

Ազատամարիկների հարազատներ, մենք՝ «Հայրենյաց պաշտպան» ԵԿ անդամներս մշտապես Ձեր կողքին ենք՝ պատրաստ ցանկացած պահի աջակից լինելու …

***Հ. Մնացականյան***
***«Հայրենյաց պաշտպան» ԵԿ նախագահ***
***80 անդամի հետ***

Միշտ հիշում ենք ձեզ ու սպասում… Միշտ հույս եմ տածում, թե հաջորդ այցիս թանգարան, կլինեն պատից հանված նկարներ… Համբերություն եւ հույս ձեր հարազատներին, տղերք:

***Ն. Ասլվածապարյան***
***22.11.2017***

Մեծ են մեր տպավորությունները թանգարանից…
Ձեզ չենք մոռանա:

***105 օպերատիվ խ. Աֆյան Անդրանիկ***
***22.11. 2014թ.***

Հուզմունքը խանգարում է ապրումներս ու տպավորություններս լիարժեք հանձնել սպիտակ թղթին: Այս պահին հերոսների ու նրանց թողած ավանդը պահպանելու, նրանց սրբազան գործը շարունակելու հաստատակամությունն ու պարտավորվածությունն ենք զգում:

***Կ. Սերգոյան, ՊԲ 40482 զ/մ հզմ***
***հրամանատար***
***120 զինվորի հետ***
***26.11. 2014թ.***

Այս տղաներն իրենց կյանքի գնով պաշտպանել են հայրենի հողը: Եվ մենք նրանց արժանի հետնորդներն ու գաղափարակիցներն ենք:

***Շարքային Հովսեփ Գաբրիելյան***
***թիվ 46492 զ/մ***
***26.11. 2014թ.***

Աներևակայելի վշտի, սպասումի, յույսի ու կարոտի կուտակում կա այս թանգարանում: Յանուն Հայրենիքի պայքարի հիշատակները այստեղ բացուած են մայրական սրտերի սպասման միջով:

Բարձրեալը թող մխիթարի բոլոր անսփոփ սրտերը, ազատություն պարգևի ողջերին, իսկ ննջեցյալների հոգիները թող լուսավորի:

Շատ թանկ գին է վճարուած խաղաղության համար, վճարուած է մարդկային կեանքերով: Գնահատենք, արժեվորենք և մեծարենք բոլոր նրանց, ովքեր տուեցին մեզ այս հնարավորությունը՝ անհայտ կորած մեր ազատամարտիկներին, մայրերին ու հայրերին:

***Օրհնութեամբ՝***
***Մեսրոպ քահանայ Արամեան***
***29.11.2014թ.***

Մենք Այգեստանի միջնակարգ դպրոցի 4-րդ դասարանցիների կազմով այցելեցինք ԱՀ ԱԿԱՀՄ հուշաթանգարան: Անհայտ կորածների նկարները մեծ հուզմունք առաջացրին մեզ մոտ: Երդվում ենք, որ նրանց արժանի հետնորդը կլինենք: Հույս ու հավատ՝ բոլոր որդեկորույս մայրիկներին:

***Դասվար եւ ծնողական կոմիտեի նախագահ***
***30 աշակերտի հետ***
***25.12. 014թ.***

Բառեր չեմ գտնում արտահայտելու սրտիս խոսքը, պարզապես ասեմ, որ  հիացած եմ տեսածով ու լսածով…

Փառք ու պատիվ մեր այն հերոսներին, ում համար դեռ այսօր էլ է պատերազմ…

***Շարքային Ռոբերտ Հարոյան***
***20.01. 2015թ.***

Ինքս լինելով ազատամարտիկի որդի, խորապես գիտակցում եմ Արցախյան պատերազմի եւ նրանում հայկական կողմի ձեռք բերած հաղթանակի արժեքը…Պարտավոր ենք արժանի լինել մեզնից ավագ սերնդին եւ իր կատարած պատմական առաքելությանը:

***Կրտսեր սերժանտ***
***Վրեժ Էվոյան***
***20.01. 2015թ.***

Միշտ հիշենք մեր եղբայրների կատարած սխրագործությունը:

***Հրայր Հովսեփյան***
***«Մարտական խաչ» II աստիճանի***
***շքանշանակիր***
***23.01. 2015թ.***

Փառք Հայաստանին, որ ունեցել է այսպիսի հերոս տղաներ, որոնք կռվել են իրենց հայրենի հողի համար: Հպարտանում եմ Վերա Գրիգորյանով եւ իր բախտակից մայրերով, ովքեր, չնայած սիրտ կրծող կարոտին, կարողացել են ստեղծել այսպիսի թանգարան:

***Արթուր Այվազյան***
***Շուշիի հակաօդային պաշտպանություն***
***29.01. 2015թ.***

Այո՜, «եթե կորցնենք Արցախը, ապա կշրջենք Հայոց պատմության վերջին էջը»… Ուրեմն՝ պահե՛նք այն աչքի լույսի պես:

***Միեր Պողոսյան***

Այստեղ մարդ շշուկներ է լսում. «Կարոտե՜լ եմ քեզ, մայրիկ, խոստանում եմ վերադառնալ տուն»:

***Աբրահամ Աբրահամյան***

Ես ծառայում եմ իմ ընտանիքին եւ իմ երկրին: Հարգանք ու պատիվ՝ այս թանգարանն ստեղծողներին:

***Խաչիկ Արփեմյան***

Թանգարանում բավականին շատ տեղեկություններ ստացա Ազատամարտում անհայտ կորած տղաների մասին:
Ցուցանմուշներով հարուստ թանգարան է:

***Շարքային***
***Գարիկ Սանասարյան***
***29.01.2015թ.***

Եթե հայ ես, ապա, վստահ եմ, այս թանգարանը պետք է որ քեզ արիականություն ներարկի՝ տխրության երանգով հանդերձ…Արցախյան պատերազմի գուցե թե կիսափակ էջերից մեկն ես կարդում այստեղ…Որտե՞ղ են այս տղաները, ի՞նչ վիճակում. թշնամին խնայել չգիտե: Հիացած եմ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների կամքով ու խիզախությամբ. դժվար գործ է նման թանգարան ստեղծելը, բայց տես որ տղաների հարազատներն այն ստեղծել են:
Կեցցե՛ն, ուրեմն:
Եվ փա՜ռք մեր ավագ եղբայրներին ու նախնիներին, որ պահել են գալիք սերունդներին կտակվելիք այս հողը:

***Կրտսեր սերժանտ Նարեկ Հունանյան***
***40 զինվորի հետ***
***30.01.2015թ.***

36534 զ/մ-ից ժամանել ենք Անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարան ու շատ տպավորված ենք: Բառերը խեղճ են՝ նկարագրելու համար մեր զգացածը…

***Ավագ սերժանտ Արմեն Ջաբյան***
***100 զինվորի հետ***
***02.02. 2015թ.***




*Գնացին ու չվերադարձան, եւ նրանց սպասում են հարազատները, սպասում է երկիրը…*



*Հուշաքանդարանի փոքր սրահում բղանների անձնական գործերն են:*



*Գործով հայրենասիրության նվիրյալները թանգարանի այցելուների շարքում :*



*Փորձությունների բովով անցած ավագ սերնդի ներկայացուցիչները պեսնելու եւ խոսելու շատ բան ունեն:*



*Հուշաքանգարանում խոսում լռությամբ*
*ոստիկանության կին ծառայողներն են:*



*Շատերն են այստեղ գալիս ընտանիքով...*



*Տառապանքն ազգություն չի ճանաչում...Արցախի ԱԿԱ հուշաքանդարան է այցելել Ղարաբաղյան պատերազմում անհայտ կորած որդու պեր Թամարա Այուբովան, ով նաեւ Ադրբեջանի անհայտ կորած զինվորների հարազատների միության ղեկավարն է :*



*Ձախից առաջինը՝ Հայաստանի քույր - կազմակերպության նախագահ Ռիմա Առաքելյանը:*



***Վարչապետ Արայիկ Հարությունյանը եւ հովանավոր Ծովինար Պետրոսյանը կտրում են հուշաքանգարանի բակում բացօթյա ցուցանմուշ դարձած աղբյուր-հուշարձանի ժապավենը:***



***Ժողովրդական խոսք է՝ կյանքդ ջրի պես երկար լինի: Աղբյուր - հուշարձանի կողքին կանգնածների գլխում, թերեւս, նույն միտքն է պտտվում՝ առ իրենց կորած որդու, ամուսնու, եղբոր կյանքը:***



*«Ղարաբաղ Տելեկոմ»-ի տնօրեն Ռալֆ Յիրիկյանը թանգարանում:*
*2001թ. հոկտեմբեր*



*Լիբանանահայ Հովիկ Պետրոսյանը թանգարանին բերած իր նվերով՝*
*«Արցախ» անունը կրող գոբելենով:*



*Գործարար Սեյրան Կարապետյանը նվերով է եկել թանգարան:*



*ԱԿԱՀՄ «Հայրենիք եւ հավատ» հուշամեդալը` կազմակերպության գործունեությունը հաճախ ու բարեխղճորեն լուսաբանող` լրագրող Նորայր Հովսեփյանին:*



***Ցույց պալու շատ բան կա...***



***Ազատի Հայրունին միշտ զինվորի հետ:***



***Մապաղ սերունդն է այցելել Հուշաթանգարան:***



***Լինում է եւ հակառակը. երբ թանգարանի ցնօրենն է լինում դպրոցներում որպես Անհայտ կորած զինվորներին նվիրված միջոցառման հյուր:***



*Երեկոյան կողմ, երբ դադարում է այցելուների հոսքը, մայրը մոմավառությամբ է զրուցում որդու եւ նրա բախպակիցների հետ...*



*Հուշամեդալի հանձնում եւ համբերության խոսք՝ անհայտ կորած ազատամարտիկի միայնակ մնացած մորը:*



***Մենք կշարունակենք հայրենիքին ծառայելու՝ ձեր կիսատ մնացած գործը, պղաներ...***



***Գործարար Բորիս Բարսեղյանը ԱԿԱՀՄ երդվյալ բարեկամներից է, պարբերաբար օգնության ձեռք մեկնող...քչերից:***



*Եկել են արտասահմանից...*



*Շրջել է սրահները, եւ ծնվում է հերթական հուզիչ գրառումը հուշամատյանում...*



***Երախտիքը չի անտեսվում… Շնորհակալություն հուշամեդալով. Ֆիլիպիններից ժամանած օտարերկրացի այս այցելուն Էպպին, նկատեց, որ թանգարանի բակի ծաղկանոցն ընթացիկ խնամքի կարիք ունի եւ … ինքնիրեն, անխոս մտավ այնտեղ ու կարգի բերեց այն:***



***Գիտությունների դոկտորից մինչեւ հավաքարար՝ հոգեկան պարտքի ճանապարհով...***



*Անհայտ կորածների մայրերի Մարփիության փոնը թանգարանում:
Միջոցառման հյուր՝ բանասպեղծուհի Ժաննա Բեգլարյանը փակ աչքերով
իր աղոթքի հետ է ...*



*Ցուցադարակից այսօրվա զինվորների հետ «խոսում են»
անհայտ կորածների հերոսության «վկաները»..*



*Հուշաքանգարան է այցելել ԱՀ ԱԺ նախագահը:*
*Խոսելիք շատ կա...*



*Իսկ այստեղ Հայաստանից ժամանած երիտասարդներն են:*



*Երիտասարդության հետ զրուցելը դժվար չէ, կես-խոսքից են հասկանում…*
*Խաղաղ երկինք ու երջանիկ կյանք բոլորիդ, սիրելինե՛ր:*



*Հուշաթանգարանից՝ անհայտ կորածների հուշարձանի մոտ, որտեղ, եթե հանդիսավոր չէ օրը, լռությունն ավելի շատ է լինում, քան խոսքը…*



*Գեներալ-մայոր Անդրանիկ Մակարյանի հերթական այցն է թանգարան:*




*Երբ հիմնական անելիքն արված է, բայց ներքուստ դեռ շարունակվում է մտորումը ...*



*Թանգարանում լուսավոր մարդկանց հետ հանդիպումից մթնոլորտն էլ է լիցքավորվում լույսով:*



*«Հույսի կամուրջ». այսպես է կոչվում Հայաստանում գործող այն հասարակական կազմակերպության անունը, որի ղեկավարն իր զորակցությունն է հայտնում Արցախի ԱԿԱՀՄ-ին եւ նրա հուշաթանգարանին:*



***Պատերազմում անհայտ կորած ազատամարտիկների, պատանդների ու խաղաղ բնակիչների հանրապետական հանձնաժողովի նիստերից մեկը` հուշաքանդարանում:***



***ԱԿԱՀՄ է այցելել ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկը: Խնդիրները շատ են, բայց մայրերին առաջին հերթին հետաքրքրում է պղաների վերադարձի հարցը…***



*Գրառում Հուշամատյանում...*



***Հայ բանաստեղծն ասել է «մեզ չի հասկանա օտարերկրացին»։ Արի ու տես, որ լինում են եւ հասկացողներ։ Այս տղաները գրառումից առաջ երկար մտածեցին… Իսկ երբ նրանց գնալուց անգլերենից թարգմանվեց տեքստը, թանգարանի աշխատողների աչքերը լցվեցին երախտագիտության արցունքներով...***

36534 զ/մ-ից ժամանած անձնակազմը թախծոտ աչքերով էր ուսումնասիրում ցուցասրահի մշտական բնակիչ ազատամարտիկ տղաներին, ովքեր միշտ կմնան ջահել, ում համար նախախնամությամբ, ավա՜ղ, չի նախատեսված ծերություն…Նրանք չէին մտածում մահանալու մասին՝ մտածում էին… մե՛ր մասին, հայրենյաց ճակատագրի, ազգի հարատեւության մասին։ Ղարաբաղյան պատերազմը նրանց խլեց մեզնից, եւ մենք երդվում ենք ավարտին հասցնել նրանց կիսատ թողածը:

***Արմեն Կամոյի Ավետիսյան***
***02.02. 2015թ.***

Ես Արցախյան պատերազմին մասնակցել եմ 1992թ. դեկտեմբերից մինչև 1993թ. սեպտեմբերի 3-ը, երբ վիրավորվեցի Ակնայի (թրք. Աղդամ) շրջանի պոստում… 3 ամիս 15 օր Ստեփանակերտի զինվորական հոսպիտալում էի … Այժմ պատերազմի 2-րդ կարգի հաշմանդամ եմ, ապրում եմ Ստեփանակերտում: Ինչո՞ւ այսպես՝ հեռվից սկսեցի խոսքս: Որպեսզի հեշտությամբ պատկերացնեք, թե ինչ զգացումներ կլինեն ինձ պատած, երբ այցելեցի Անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարան: Չխորանալով, սակայն, դրանց մեջ, ասեմ, որ մենք՝ այսօր հայրենիքում ապրելու բախտ ունեցողներս, մեր ժառանգներով հանդերձ, չենք մոռանում նրանց սխրանքները եւ նրանց սուրբ հիշատակը փոխանցելու ենք գալիք սերնդին… Հուշաթանգարանում Արցախյան ազատամարտից պատկերներով (լուսանկարներով) անկյուն էլ գոյություն ունի, ու ես այնտեղ տեսա իմ Արարատ որդուն՝ տանկի վրա, մարտի ժամանակ… Նա հիմա էլ է ծառայում ՊԲ-ում, բարձրաստիճան սպա է, շքանշան ու 10 մարտական մեդալ ունի, բարի ծառայություն մեր բոլոր սպաներին ու զինվորներին:

Թող այլեւս պատերազմ չլինի, ոչ-ոք թող չարժանանա այն ծանր փորձությանը, որն անցած պատերազմում բաժին ընկավ մեր անհայտ կորած ազատամարտիկներին: Շնորհակալություն եմ հայտնում թանգարանի տնօրեն Վերա Գրիգորյանին: Երկար կյանք Ձեզ, տիկին Գրիգորյան, ու բարի վերադարձ Ձեր եւ մյուսների անհայտ կորած զավակներին:

***Արմեն Կարոյի Հովսեփյան***
***02.02. 2015թ.***

Վերադարձե՛ք տուն, ձեզ սպասում են բոլորը՝ սիրով ու գորովանքով:

***ԳՄՀՏԱՀՏԿ նորակոչիկներ (60 հոգի)***
***մայոր Լեոնիկ Քամալյանի գլխավորությամբ***
***02.02. 2015թ.***

Միության հարգարժան անդամներ, երկար եք սպասել ձեր զավակների, ամուսինների, եղբայրների վերադարձին՝ հույսը չկորցնելով: Այդպիսին էլ մնացեք... Մենք իրավունք չունենք չսպասելու, նրանք էլ՝ չվերադառնալու: Ուրեմն՝ թող հույսի ճանապարհը լույսով լինի:

***ԱՀ ԱՖ խորհրդի նախագահ Ա. Ղահրամանյան,***
***խորհրդի անդամներ Յու. Ավանեսյան,***
***է. Ծատրյան, Ա. Գարաքյան***
***06.02.2015թ.***

Մենք ձեզ սպասում ենք մեծ կարոտով, վերադարձեք տուն, մեր քաջ մարտիկներ:

***ՊՆ 37221 զ/մ սպա՝***
***ավագ լեյտենանտ Թովմասյան***
***120 զինվորի հետ***
***12.02.2015թ.***

Արցախ աշխարհում չկա այնպիսի ընտանիք, որն այս կամ այն կերպ հարված ստացած չլինի պատերազմից, բայց անհայտ կորած ազատամարտիկների հարազատների ցավն, իմ կարծիքով, ամենից խորն է… Իմ և իմ համածառայակիցների անունից դիմելով նրանց՝ ասում եմ. մենք էլ ենք սպասում ձեր որդիների՝ մեր ավագ եղբայրների վերադարձին…

Շնորհակալություն եմ ուզում հայտնել տիկին Վերա Գրիգորյանին, որ այսքան տարի ջանք ու եռանդ չի խնայել՝ ստեղծելու համար այս թանգարանը:

***ՊԲ 46677 զորամասի սպա՝***
***ավագ լեյտենանտ Ս.Սողոմոնյան***
***80 զինվորի հետ***
***12.03.2015թ.***

Говорят, война не закончилась, пока не похоронили последнего солдата. Спасибо всем тем, кто помогает найти солдат.

***Наталья Мурга,***
***ИД «Комсомольская правда »***
***24.03.2015г.***

Ես՝ Ստեփանակերտ քաղաքի բնակիչ Իլյա Աբրահամյանս, իմ անհայտ կորած ազատամարտիկ Գառնիկին շատ եմ սպասել, ու կսպասեմ էլի՛…Մեր տղաները պետք է վերադառնան: Խնդրում եմ պատկան մարմիններին՝ ջանք գործադրեն նրանց տեղը ճշտելու եւ ազատելու համար: Վերջում էլ ասեմ, որ շատ շնորհակալ ենք Անհայտ կորած ազատամարտիկների հարզատների միության նախագահ Վերա Գրիգորյանի՝ երկար տարիների աշխատանքից, մեր հանդեպ ցուցաբերած նրա հոգատար վերաբերմունքից:

***29.03. 2015թ.***

Հուշաքանգարանի սիրելի աշխատակիցներ եւ հույս ու հավատով ապրող մայրեր, առաջին անգամ ոտք դնելով հիշյալ թանգարանը, լցվեցի հուզմունքով ու հպարտությամբ: Աշխատանքը, որը կատարվել է այստեղ, արժանի է անկեղծ դրվատանքի: Այս թանգարանը թերեւս կարելի է համեմատել հուշակոթողի հետ… Վստահ եմ, որ նրա նշանակությունը տարիների հետ ավելի է արժեվորվելու: Եվ դրա համար շնորհակալություն տիկին Վերա Գրիգորյանին:

***Վարուժան Առաքելյան***
***ԱՀ կառավարության աշխատակազմի***
***կազմակերպչական բաժնի վարիչ***
***05.04. 2015թ.***

Տեւական սպասման դժվա՜ր զգացումը…

Հույսն ու հավատը թող զորավիգ լինեն ձեզ, անհայտ կորած ազատամարտիկների հարազատներ, թող Աստծո ու բոլորիս կամոք մի օր տուն վերադառնան ձեր սիրելիները՝ ամուսին, եղբայր, որդի…Ամեն անգամ մտնելով թանգարանին կից ռազմահայրենասիրական կաբինետը, սիրտս լցվում է թախիծով, բայց եւ դաս առնում…

Հույս ու հավատով սպասում ենք ձեզ, իմ մարտական ընկերներ…Ձեր սխրանքն անմահ է, ձեր անունը՝ մեր սրտերում:

***Թիվ 46492 զ/մ 3-րդ գումարտակի***
***բուժկետի պետ, ավագ ենթասպա***
***Տ.Առուստամյան***
***04.04. 2015թ.***

Спасибо большое, дорогая Вера.
Былы очень интересно.
Всего хорошего.

***Елена. я из Германии.***
***11.04.2015г.***

Ստեփանակերտի հ.12 հիմնական դպրոցի 6-րդ դասարանի աշակերտները խորին շնորհակալություն են հայտնում Ձեզ, տիկին Վերա: Հավատում ենք, որ մեր բոլոր քաջարի զինվորները կվերադառնան իրենց տները:

***11.04. 2015թ.***

ԱՀ Մարտունու շրջանի Ջիվանիի հիմնական դպրոցի աշակերտներս, զինղեկ Հենրիկ Մինասյանի և ֆիզղեկ Արթուր Բալայանի ուղեկցությամբ, այցելեցինք Արցախի Անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարան: Հուզված ենք… Հուսով ենք, թե նրանք մի օր, այնուամենայնիվ, կերեւան, տուն կվերադառնան:

***11.04. 2015թ.***

Սահմանամերձ վերաբնակեցված համայնքի անունից միանում ենք ձեզ, վշտակոծ մայրեր, և հույսով սպասում տղաների վերադարձին:

Ցանկամ՝ հայոց մայրերի աչքերում այլևս արցունք չերեւա…

***Է. Վարդանյան***
***26.04. 2015թ.***

Յարգանք, փառք ու պատիվ՝ բոլոր մեր անհայտ կորածների հիշատակին: Յարգանք Ձեզ, հայ զինվորներ:

***Անի Ասատրյան***
***28.04.2015թ.***

27.04.2015 г.

Дякую! Спасибо, что помните.

Нехай ніколи не буде війни. / Мира всем.

Анжеліка, Україна, Івано-Франківськ

Бажаю миру в Вашому домі. Війна – це жах який руйнує сім'ї та народи та примушує людей ховати та цуратися найблагородніших людських якостей як взаємопомічь та братерство. Війна породжує ненависть в людях і породжує сльози. Тому хотілось би щоб ні це землі, ні де-інде в світі людям не доводилось бачити війну, а кожен рік приносив добробут, любов та злагоду. Мир Вам. ☮

Олександр Мельник
м. Львів, Україна
27-04-2015

[illegible]
[illegible]
[illegible]

[illegible]
[illegible] 28. ~~[illegible]~~ 2015

[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

[illegible] 2015 [illegible]



4. 5. 15

Thank you so much for opening our minds and hearts to the story of Nagorno Karabakh. We leave your museum with heavy hearts, but with a much better understanding of the conflict.

- Louise, Geoffrey, + Max

Շնորհակալություն ձեր կատարած հայրենանվեր գործի համար: Մեր սերունդը ձեր շնորհիվ տեղեկանում է պատերազմի տարիների իրադարձություններից: Իրոք, ձեր գործն արժանի է ամենաբարձր գովասանքի: Անհնար է նկարագրել այն, ինչ զգում ես՝ շրջելով այս սենյակներով, երբ նայում ես այս նկարներին: Ձեզ հետ միասին սպասում ենք ձեր զավակների հայտնվելուն:

***Գոհար Ավշարյան եւ***
***Ստեփանակերտի հ.11 ավագ դպրոցի***
***10-րդ դասարանի աշակերտներ***
***08.05. 2015թ.***

Շատ տպավորված ենք Ձեր ջերմ վերաբերմունքից, տիկին Վերա: Մեզ հաղորդեցիք շատ հետաքրքիր ու սպառիչ տեղեկություններ տղաների ճակատագրի մասին:

Հնարավորության դեպքում կայցելենք կրկին:

***Ստեփանակերտի Վ. Ջհանգիրյանի անվան***
***հ.11 ավագ դպրոցի 10-րդ դասարան***
***13.05.2015թ.***

Ոճիրները չի ազատագրել. արդարությունը և ամենի իրեն: Գ. Եփրեմի Ամանդ

01.06.15թ.

Այս թանգարան այցելելույս տպավորություններս շատ մեծ են: Միայն կարող եմ ասել, որ համ-բերություն եմ ցանկանում մեր անհայտ կորած ազատամարտիկների ծնողներին ու հարազատ-ներին: Թող նրանց հույսը երբեք չմարի:

Արտաշ. հ. 11 ավագ դպրոցի 11բ2 դասարանի աշակերտուհի
03.06.15թ. Մարիամ Գևորգյան

Juni 2015

Hoe moeilijk is het om onder woorden te brengen, wat het betekent om je kind, vader, broer, zus niet meer terug te zien. En onwetend te zijn over het lot van deze dierbare.
Elke dag is er één van hoop op terugkeer, of 'n signaal, levensteken.
Zelfs het bericht van overlijden van de vermiste dierbare kan een verlossing van de eindeloos lange onzekerheid.
Lia Kleibroek / Holland
Rita Moosch / Holland

8 June 2015

All those men and women who died must be remembered, and this small, beautiful museum is a wonderful way to keep their memories alive.
[illegible] UK

22/06/2015

Desde España e Italia, gracias por mantener viva la memoria de aquellos que sufrieron el terror y la tragedia de los conflictos. Confiamos en que la paz en Nagorno Karabaj perdure para siempre.

Orielle   Alejandro

24/06/2015

[illegible]

[illegible]

27/06/2015)

[illegible]

[illegible]

6/07/2015

Pamięci wszystkim pomordowanym, dzielnym żołnierzom Ormiańskim - Aby prawda nigdy nie została zapomniana i przekłamana w mrokach dziejów...

Łukasz Gontowicz
Jacek Gontowicz
Poland

8/7/2015

Ein sehr eindrückliches und spannendes Museum. Einmal mehr wird aufgezeigt, welches Leid und Verwüstung ein Krieg über ein Land bringt - egal wo auf der Welt!

Christoph (Schweiz)

8/7/2015

Ein gutes, trauriges Museum. Ich hoffe, dass der Konflikt endet und trauere für die opfer beider seiten

Florian (Germany)

10/07/2015

[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

[illegible]

16/VII-2015թ [illegible]

16/07/2015

~~[illegible]~~ A los héroes que han luchado por la independencia y la libertad del Nagorno Kara[bagh] desde México reconocemos y apoyamos su lucha ante el acoso y la obstinación de Azerbai[yán]
A la memoria de todos los caídos, nuestro más profundo respeto y reconocimiento

Ricardo Cárdenas

México

16/07/2015

[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

Thank you for continuing to honor those who gave everything. Hopefully you will not suffer another tragedy such as this while working for independence. - Timb Mannuzz.
- USA

Cieszę się że mogłem odwiedzić to miejsce które jest dowodem bohaterstwa i patriotyzmu. Polska wielokrotnie była poddawana podobnej próbie i doskonale Was rozumiemy.

Maciej Wiczarski (POLSKA)
17.07.2015

6.2015թ. Շատ մեծ ուրախությամբ այսօր բանակա-
յանում գտնվող [illegible]
[illegible] [illegible] և
բանակայանում [illegible] [illegible] [illegible]։
~~[illegible]~~ Շատ ուրախ եմ որ [illegible]-
ացել [illegible] բանակայաններ են
գնում ; 8-րդ [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] ; (56 [illegible] [illegible]).

HONZA A HANKA VRBÍKOVI, PŘIJELI JSME VČERA DO NÁHORNÍHO KARABACHU, DNES ZE STEPANAKERTU DO ASKERANU A ODTUD DO AGDAMU. TAKOVÉ MĚSTO JSME JEŠTĚ NIKDY NEVIDĚLI A DOUFÁME, ŽE UŽ NIKDY NEUVIDÍME. TOTO TO KRÁSI PŘESUNE NÍC.

[signature]

Միայն կուզեմ ըսել, թէ երբեք
ձեր լոյսը չմարէք, միշտ [illegible] լոյսով։
Այդ նոյն լոյսով, որ մեր ֆէտայիները
ունէին և այդ նոյն լոյսով, որ ազատագրեցին
մեր ֆէտայիները Ղարաբաղը։ Իրենք կեանք
կայ, չկայ այ կայ։ Վստահ եմ, որ
այդ կորսուած ֆէտայիները կուզեն, որ
լոյսով լի ըլլաք ու կը պաշտպանէք
այդ վերադարձի օրը։
[signature] 18/07/20

[illegible]

[illegible]

18/7/2015

Փառք և պատիվ մեր [illegible] [illegible] և [illegible] անմեղ նահատակներին: [illegible] [illegible] և [illegible]: Հավերժ փառք [illegible] [illegible]

20.07.15 [signature]

This is a gem of a museum. Beyond history, it conveys the sorrow, pain and hope of those who have lost but continue to hope and love and remember

21.07.15 [signature]

Музей памяти об одной из кровопролитных войн 20 века.
В экспозиции отражены как стойкость простых карабахцев, защищавших родную землю, так и военный талант командиров и руководителей края.
Карабахцы с честью выдержали очередное испытание, выпавшее на долю армянского народа, благодаря чему Армения и Арцах смотрят в будущее с гордо поднятой головой.
Слава павшим героям!
Спасибо Вере, создавшей ~~этот~~ музей.

Ханян
Гамлет Сократович
ст. научн. сотр. ЦИАМ им. П.И. Баранова,
к.т.н., г. Москва, Россия
21/VII – 2015

Année après année, Vera Grigoryan continue d'entretenir la flamme de la mémoire des disparus du conflit. Tâche douloureuse mais importante. Je lui souhaite de voir un jour aboutir ses recherches et enfin trouver un repos bien mérité.

Thomas Hallin
ICRC
21.07.2015

Ափսոս տարիներ ի վեր են [illegible]
այն [illegible] պատերազմ-[illegible]
են [illegible] հոգին [illegible] [illegible]
մեր [illegible] [illegible] [illegible]:

Ես հավատում եմ մեր զոհերի վերադարձին:

Ձեզ հաջողություն...

Աստված օրհնի Ձեզ ու այսպիսի [illegible] ՄԱՅՐԵՐին, ՀԱՅՐԵՐին ու ՔՈՒՅՐ-ԵՂԲԱՅՐ-ներին...

21.07-2015թ.

[signature]

Ողջ [illegible] պետք է չմոռանալ: [illegible]-ները [illegible] հաստատ են: Մեր [illegible], [illegible], [illegible], մենք այստեղ [illegible] ենք: [illegible] ենք, բայց [illegible]-[illegible] [illegible] [illegible]: [illegible] [illegible] [illegible] [illegible], թող Աստված [illegible] [illegible] [illegible] հոգիներին: Փառք ու [illegible] [illegible]:

[illegible] [illegible] [illegible] [illegible]՝ [illegible]:

21.07.2015թվ

[signature]

How can we begin to express our feelings after witnessing the photo's and objects on display. it is a stark reminder to us that the atrocities of war will not heal before the missing are retrieved and some balance is restored. Respect for the continuous work done here and

the lessons thought to us, who have never witnessed war.
22/7/15 from The Netherlands

It is a very moving experience to see real human beings behind a word like war. It is a very strange feeling to walk around in a zone which has been recently freed by the ones whose portraits we have the freedom and peace to watch now.
Respect for the families, the soldiers and the ones who keep the memory alive.

22/7/15 from Belgium
Brussels.

Thank you for this one of a kind experience and all that you all do for these young men and women who were lost during the war. The diaspora is here with you, thousands of miles away physically but always next to you spiritually.
-AYF Youth Corps 2015

... [illegible]

PASATU DITUZUEN PENURIA GUZTIEN OSTEAN,
BAKEAN BIZITZEA ETA ZORIONTSUAK IZATEA
ESPERO DUGU. 2015/VII/30
MIKEL ETA JANE

[illegible] 30.07.2015р. Київ Україна.

Very interesting museum on the fallen soldiers of this country.

Frederic Harvey & Stephanie Marsi
Canada

Thank you for sharing with us, the sad storries of the missing soldiers.

Greatings from Denmark

Jette Weiss, Cathrine, Ulla and Jakob

[illegible]

[illegible]

4 - օգոստոս 2015 [illegible]

[illegible]

Thank you for your bravery strength and super power. I am a proude Armenian.

Angela Simonian 8-4-15

[illegible]

[illegible]

04.08.2014

Помним... скорбим... боремся...

Спасибо Вам за мирное небо!

04.08.2015.

Спасибо, этому музею который хранит
память павших во время защиты
своей родины, своей земли, Мы будем
всегда благодарны!!! Спасибо за мирное
небо! (М. М.)

Een erg indrukwekkend monument
voor de missende soldaten.
Het laat zien hoe vreselijk
oorlog is en het lange wachten
op antwoorden over het lot
van geliefden is verschrikkelijk.
Alle moeders huilen..

Liefs uit Holland
Koen & Janneke, 6 augustus 2015

Musée très émouvant et accueil très chaleureux -
Un souvenir inoubliable -
Catherine et Guy Domas
avec Lise et Clément

Eine sehr emotionale Begegnung. Schade
um diese jungen Leben.
Das einzige, was uns bleibt, stets
an SIE zu denken. (Julia K
18.08.2015

'15 Een ontroerende en bijzondere plek vol
met waardevolle herinneringen. Dank voor de
hartelijke ontvangst en heel veel goeds toegewenst!
Floris de Gelder / Jan Willem van ...
Nederland

Thank you for an insight into the history
and tragic loss of life to your nation.
It was eye-opening and emotional.
Mark and Kirsty Bennetts
London, UK 19/Aug.15

[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 19.08.2015թ

Danke für den freundlichen Empfang in diesem tragischen,
jedoch liebevoll aufbereiteten Museum. Aus Deutschland / Germany
Alexander und Sebastian 19. 8. 2015

Words cannot describe the weight of sadness
and empathy we feel with the people of Artsakh,
especially after visiting a valuable museum
such as this. May the hope of our Lord give
the mothers and fathers the strength they
need.
The Baroness Cox Pilgrimage
[illegible] 20/8/15 London.

Seta Cox [illegible]
[illegible] Steven [illegible]
Richard & [illegible] Bedwell

20.08.2015г. Сегодня мы с семьей посетили музей памяти безвести пропавших и погибших в Карабахской войне. Низко кланяемся и скорбим вместе с родными и близкими.
Огромное спасибо всем, кто создал этот музей, поддерживает и сохраняет память для потомков. Дай Бог, чтобы на Арцахской земле никогда не было войны и матери пусть дождутся своих сыновей!

Семья Айрапетян.

Камо Айрапетян [signature]

Айнура Шерматова [signature]

Жамиля Омуралиева [signature]

26.08.2015թ. [illegible]

[illegible] [signature]

[illegible] [signature]

[illegible] [signature]

27/08/2015 Thank you for sharing the stories of the brave soldiers who fought for this beautiful land. - Melissa Karapostoles, USA.

[illegible]

004940-60823767 [illegible]

Ich bin sehr begeistert von diese [illegible] Museum. Für Frau Vera alles Gute.

Architekt, [illegible] Der Petrosian Hamburg

[illegible] 30.08.2015

Dear mrs. Wira,
I am not an armenian but an old friend of armenian,
You are really really hero, I am proud of you,
God bless you
30.08.2015
nahid Namvarbakhsh.

8/30/15
[illegible]

[illegible]

Dear mis wira:
good luck with every thing.
love
Parvaneh

Սիրով՝ [illegible] Արցախցիներին
հաղթանակներով. [illegible]
[illegible]
30.08.15 թ.

Կարոտով սպասում եմ Ձեզ…
Շնորհակալ եմ հանդիպման [illegible] հայրենի-
հողերի վրայ.

Ձեզ հարգանքով ու սիրով
[illegible]
5/09/2015

Honor to those who fight & protect
this land. Wish Artsakh peace.
Teresa Leung
(Hong Kong)
September 21, 2015

Wszystkiego, co najlepsze i mnóstwo spokoju
wszystkim mieszkańcom Górskiego Karabachu -
[illegible], Katarzyna, POLA
September 22th, 2015.

Մեծ յարգանքով [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]
29.9.2015

Un bonito lugar donde las familias
puedan conmemorar la memoria
de sus personas queridas, aquellas
que desaparecieron un día y no
tienen todavía un lugar en el
cementerio.
Angela María
30/09/2015

Я не первый раз посещаю музей без вести пропавших в г. Степанакерте. Идея создания такого музея очень хорошая, т.к. поколение меняется, и чтобы наши герои и без вести пропавшие всегда были в памяти всего карабахского народа.

30.03.2015

Аванесян Манук [signature]

A VERY MOVING MUSEUM. LIKE OTHERS BEFORE ME I WISH ARTSAKH PEACE.

1/10/2015

STEPHEN POWELL, WALES

I wish artsakh peace & found the museum an invaluable asset.

Tom Kinsella (Melbourne, Australia)

04.10.2015

Ես շատ [illegible] ու հուզված եմ ձեր շատ հուզմունքով [illegible]

Ա. ~~[illegible]~~ [illegible]

04.10.10

Տպավորված եմ թանգարանով: Ցավալի է, որ ցավացնող հուշեր է արթնացնում: [illegible] կազմակերպիչները շատ են կարևորում նման թանգարանի գործունեությունը: Ցանկանում եմ, որ բոլոր անհայտ կորածները [illegible] 39138 [illegible] [illegible]: Գ. Հովհաննիսյան [signature]

Muy interesante el museo. Es importante mantener el recuerdo de aquellos que desaparecieron en la guerra. Espero que las familias puedan algún día tener noticias de sus seres queridos.
Gracias por la hospitalidad.
Susana (España) 5.10.2015.

Herzlichen Dank für den freundlichen Empfang! Mögen die Familien, die auf Nachricht von ihren Verwandten warten, Informationen über das Schicksal ihrer Angehörigen erhalten. Ich wünsche allen Menschen der Region Frieden!
Marcus [illegible], Wien/Österreich 05/10/15

[illegible]

ALIZA & MENHEM
ISRAEL

Наша [illegible], [illegible]!
[illegible] 09.11.2015.

09.10.2015թ.

Մենք՝ ԱրՊՀ-ի բանասիրական ֆա-
կուլտետի լրագրության բաժնի 1-ին
կուրսեցիներս, այսօր այցելեցինք Անհայտ
կորած ազատամարտիկների թանգա-
րանը: Մենք զգացինք մեր հերոս-
ների շունչը, ճանաչեցինք նրանց
[illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] շատ թանկ է:
[illegible] Արցախ, [illegible] մեր հերոս-
ները է:

преп. рус. яз. АрГУ Мовсесян Д. А. [signature]

Ես [illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible]:
[illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible]
և [illegible] [illegible] [illegible]:
[signature]

14.10.2015 Freedom for Artsakh!

Anne-Laure et Marie - France

14.10.2015
Liri me bashkim! Rrnoft Artsakh
i lirë! Arbëri nga Kosova, Albania

愿卡拉巴赫没有战争，永远和平，感谢善良的卡拉巴赫人。

高超，中国
China, chongqing
16.oct.2015

16.10.2015 BOSTJAN, SLOVENIA

16.10.2015 May all their souls rest in peace and never be forgotten. Germany, Klaus Meyer.

[illegible] ...

MPZ. 9.1-5 [illegible] 17.10.15թ.

[illegible]

[illegible] 18. [illegible] 2015

[illegible]

26.10.2015թ. «[illegible]» [illegible]
[illegible]

[illegible]

[illegible]

All we have to decide is what to do with the Time that is given to us, ~~and~~ Soldiers have already decided to protect all our nations, that is why we are proud to be soldiers of Armenia and Nagorno Kharabagh. David Keshishyan

[illegible] Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի։ [illegible]

14.07.2016 [illegible]



***Երիտասարդությունն է երկիրն առաջ տանող ուժը:***



***Կարոտով ու սպասումով...***




***Բարձրաստիճան սպաներով թանգարանում: Կենտրոնում՝ հրետանային առանձին բրիգադի հրամանատար, գնդապետ Գրիգորի Սահակյան: 2019թ. հոկտեմբերի 10:***



***Վաղվա օրվա առջև պատասխանատվության զգացումով...***



*Այսպես է ծնվում հուշամատյանը՝ օրից օր, մարդուց՝ մարդ...*



***Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Մհեր Հարությունյանը «Հուշամատյան-3» գրքի շնորհանդեսին:***



*«Ջինվոր» ՀԿ-ների համակարգող խորհրդի նախագահ Մարգարիտա Խաչատրյանի հերթական այցը ԱԿԱ հուշաքանգարան:*



*Երբեմն նաեւ սովորական օրով է սիրտը նրանց պանում պղաների հուշարձանի մոտ...*



*Ծաղիկներով այց` Անհայտ կորած ազատամարտիկների հիշատակի օրը:*



*Արցախի ճակատագիրը, որի էջերից մեկն էլ ԱԿԱ հուշաթանգարանն է, շատ օտարերկրացիների է հետաքրքրում, եւ ոմանք հուշաթանգարան են գալիս նույնիսկ փեսագրիչ սարքերով աշխարհին պատմելու համար մի բուռ հերոսական ժողովրդի կամքի ու նպատակի մասին:*



***ԱԿԱՀՄ ղեկավար ու թանգարանի հիմնադիր Վ. Գրիգորյանի ժպիտը խոսում է այն մասին, որ Անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարան հեռավոր Փարիզից այցելության է եկել նա, ում վաղուց գիտեն մայրերը՝ Հակոբ Գույումճյանը։***



***Ամենայն խոնարհումով...***




*Գնդապետ Բարեղամ Մուրադյանը՝ սպաների հետ:*



*Անգնահատելի է հայրենիքի նվիրյալ անչանց բարոյական աջակցությունը...*



*Գնալով պակասում է որդիներին սպասող ծնողների թիվը... Այս շարքից արդեն բացակայում են երկուսը:*



*Տեսածի փպավորությունները են կիսում... Նրանք շատ բան են տեսել, այդ թվում երեք պատերազմ. Երկրորդ համաշխարհային, մեզ համար երկրորդ յեւակերպմամբ՝ Հայրենական մեծ, այնուհետեւ՝ Արցախյան Ազատամարտ եւ Ապրիլյան քառօրյա... ընդ որում առաջինի ռազմաճակատներում թրծվել են նրանց ջահել հոգիները:*



*ԱԿԱՀՄ-ը, թանգարանով հանդերձ, համագործակցում է  Կարմիր խաչի միջազգային կոմիտեի Սպեփանակերտի գրասենյակի հետ: Նյութական աջակցություն վերջինիս կողմից:*



*Գրենական պիտույքներ՝ Գիտելիքի օրվա առթիվ:*



*Վայելիր, փոքրիկ, ուրախությունդ...*



*Տոն օրերին ինչո՞ւ չէ...*



*Դե, իսկ Ամանորին հարկապես....*



*«Տաք սրտով» այսպեղ մտնողին սպասում է թանգարանի աշխատողների երախտագիտությունը:*




*Հույսով, այո, սպասում ենք քեզ...*



*Զինվորի գրառումն՝ առավել թանկ...*



*Օրինակելի զինվորին՝ ԱԿԱՀՄ պատվոգիրը՝ հենց թանգարանային սրահում...*



*ԱԿԱՀՄ 6-րդ համագումարը: 2014թ. հուլիսի 14:*





***Միշտ էլ հուզիչ է լինում գեն. Իվանյանի անվան ռազմավարժական ուսումնարանի սաների հետ հանդիպումն այստեղ:***



*Թանգարանն այլեւս իրենց չվերադարձած զավակների հիշատակի տունն է, ուրեմն՝ թող ներս մտնելուց առաջ այցելուների աչքը բակի ծաղիկների՜ն զարնի...*



*Ամենաուշադիր լսարանի հետ...*



*Պաշտպանության բանակի հրամանատարի հետ կարելի է կիսվել ամենակարևոր հարցով ...*



*Արիության դաս թանգարանում:*





*Ամենատուշադիր լսարանի հետ...*






***Դաս հայրենյաց***



*Զինվորականներին այստեղից հաճախ են ճանապարհում հուշանվերներով, գրքերով:*



*Իրե՞ր, թե՞ մասունքներ...*



*Հայաստանից եւ արտերկրից...*



*Հրաչյա Բեգլարյանի հանդիպումը անհայտ կորած ազատամարտիկների ծնողների հետ:*

03.11.2015г. Сегодня я посетил музей памяти безвести пропавших и погибших в Карабахской войне и освободительном движении. Я очень впечатлен и нет края моим эмоциям. Вновь увидев эти редкие и исторические фотографии я вновь чуть не прослезился, вспоминая те ужасные дни (тогда мне было 5-6 лет). Хочу поблагодарить в частности Веру Арамовну Григорян и всех тех кто принимал участие в создании такого музея. Потому, что благодаря таким музеям и организациям молодое поколение и гости столицы могут узнать более визуально и представить себе, что происходило в те самые ужасные годы войны.

И в завершении хочу пожелать всем матерям, тех молодых и мужественных ребят здоровья, терпения и все таки ещё раз надежду, на возвращение своих кровинушек, т.е. сыновей. Я очень потрясен, тем, что увидел в музее. Дай Бог, чтобы наш народ впредь процветал и подобное не повторялось.

Григорян Давид Эдуардович
david.grigoryan.86@bk.ru (подпись)

04.11.2015թ.

Այցելեցինք այս թանգարանը, տեսանք հերոսների
կյանք ապրելով, որ ունենք մեր անկախ [illegible],
որոնց սպասում էին անհամբեր: Թող Աստված
օգնական լինի, որ երկրով [illegible] [illegible]
[illegible]:

Ցանկալի է, որ հաջորդ անգամ
այցելեն, [illegible] [illegible] [illegible]:

Կապանի [illegible] դպրոցի աշակերտներ
VIII - IX - X

[illegible] [signature] [illegible]
[illegible] [signature] [illegible]

05.11.2015 [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

Nick Wagner.

1|11|2015 This was an interesting Museum which gives an insight to the history of the war with Nice Photos which give you a idea of what happend and to remember the fallen soldiers.

David Black.

Molto emozionante! È importante ricordare ed onorare chi ha combattuto per la libertà

12-11-2015.

So sombre, yet so beautiful, this has been a moving testament to the living memory of so many. May their spirits live forever in our hearts and minds. Thank you for such a heartFfel tour. In gratitude,

Sebastian Klich.

16.11.2015թ

[illegible]

[illegible]

[illegible]

16.11.15թ.
[illegible]

Գ. [illegible]

19.11.2015
Many people missed... It's too sad.
このような悲しい出来事が起こらないことを祈るばかりです。
世界が平和でありますように Yuki JAPAN.

19.11.2015
戦争とは各々の正義があるので一概にどちらが悪いということはできないが、いずれにせよ残された家族の悲しみを考えると胸がつまる。 三元 日本国

20.11.2015թ. [illegible]
[illegible]
Թող աստված օգնական լինի, որ [illegible]
[illegible]
[illegible]
Ս. 12 [illegible]
Ն.Գ. [illegible]

Производит впечатление... и память которую поддерживают сами люди. Не правительство, а граждане.
И масштаб страшной войны 1988–1994. О которой в России почти ничего не известно.

Мы снова встретились с геноцидом армян, здесь становится видимым [illegible] феномена геноцида начала XX века и его новые попытки.

Доктор филос. наук, профессор [illegible] А. М.
21. 11. 2015

Շատ տպավորված եմ տիկին [illegible]
Գրիգորյանի կազմակերպած [illegible]
թե իր թանգարանով և [illegible]
[illegible]:
Մեծ հպարտություն եմ զգում, որ կան
նման հայրենասեր ու ազգանվեր
[illegible] կանանք մեր ժողովրդի:

[illegible] Բաղդասարյան
21. 11. 2015թ.

[illegible]

21.11.2015թ. [illegible]

A great way to Keep The memories fresh and alive
Ian USA 25/11/15

[illegible]
28/11/15

To muzeum nie tylko ważne, ale przede wszystkim miłości matek do swoich dzieci. I muzeum cierpienia, tak jak [illegible] [illegible] [illegible]. [illegible]
[illegible] 01.12.015.

1. 12. 2015
战争已经过去
和平将会带来春天
愿卡拉巴赫拥有
一个又一个美好的春天
chengdu china shandong
[illegible]
齐鹏

祈愿世界和平．圆梦中国．人民幸福

12.7.2015

[illegible]

Իմ խորին երախտագիտությունը 65 [illegible]

Խաղաղ, խաղաղ, խաղաղ ....

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

[illegible]

16.12.2015թ.

[illegible]

18.12.2015г.

Благодарим организаторов музея за возможность соприкоснуться с историей страны и познакомиться с теми, кто воевал за свободу народа.

Желаем Вам, чтобы те, кто пропал без вести, были найдены и вернулись домой!

Соболева Ксения
Авериенов Сергей
Россия, Пермь

26.12.2015

This museum is a living memory of those who fought and sacrifised their lives for freedom and independence. It was a very touching experience to visit this place.

Long live free and independent ARTSAKH.

Kinga & Ivan E.
Eysturland Eysturland
Klaksvík, Faroe Islands

30.12.2015թ.

Արյան գնով ազատագրված Արցախը դեռ շատ բան ունի ապացուցելու աշխարհին:

Անհայտ կորած ազատամարտիկներին,
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]...

[illegible]...

[illegible]

[illegible]

Ludzie nie są stworzeni do życia w sytuacjach granicznych, jak w „Imperium" pisał Kapuściński. Mieszkańcy Ukrainy niestety w takiej sytuacji zostali postawieni. Mam tylko nadzieję, że długo to już nie potrwa.

18.01.2015 Maciej Mała

[illegible]

Our heart cry with yours and we
long for the return of your sons, brothers
and fathers. Thank you so much for
this project of love and honor. Through
knowledge the light shines forth.

Alexander Schaller 21.01.2016
Alex Schaller, USA

Thank you for sharing your story with me.
More than anything I wish for peace in
this world so that these things will never happen
again.
Matt, USA 22.01.2016

Спасибо за то, что храните
память о солдатах, честно и верно
охранявших свою Родину! Пусть
Бог утешит вас и защитит,
даст мир на этой земле.

Милена Шаллер, Россия. 26.01.2016

DZIĘKUJĘ ZA OPROWADZENIE PO MUZEUM 1-02-2016
MICHAŁ

Вечная память героям!!!
11.09.2016 RUSSIA, MOSCOW
[signature]

Мы помним всех наших бойцов
Спасибо что храните память о них
11.08-2016 Игитян К.А. Брежи

Our heart cry with yours and we long for the return of your sons, brothers and fathers. Thank you so much for this project of love and honor. Through knowledge the light shines forth.

Alexander Schaller 21.01.2016
Alex Schaller, USA

Thank you for sharing your story with me. More than anything I wish for peace in this world so that these things will never happen again.

Matt, USA 22.01.2016

Спасибо за то, что храните память о солдатах, честно и верно охранявших свою Родину! Пусть Бог утешит вас и защитит, даст мир на этой земле.

Милена Шаллер, Россия. 26.01.2016

DZIĘKUJĘ ZA OPROWADZENIE PO MUZEUM 1-02-2016
MICHAŁ

Вечная память героям!!!
11.09.2016 RUSSIA, MOSCOW

Мы помним всех наших бойцов
Спасибо что храните память о них
11.08-2016 Исобян К.А. Ереван

29.2.2016 DUSAN PALA
HRADEC KRÁLOVÉ
CZECH REPUBLIC

04.03.2016р.

[illegible]

Жди меня и я вернусь.
Только очень жди,
Жди, когда наводят грусть
Желтые дожди.
Жди, когда снега метут,
Жди, когда жара,
Жди, когда других не ждут
Позабыв вчера.
Жди, когда из дальних мест
Писем не придёт,
Жди, когда уже надоест
Всем, кто вместе ждёт ....

.... Жди меня, и я вернусь
Всем смертям назло.
Кто не ждал меня, тот пусть
Скажет — Повезло

Не понять не ждавшим им
Как среди огня
Ожиданием своим
Ты спасла меня.
Как я выжил, будем знать
Только мы с тобой
Просто ты умела ждать,
Как никто другой.

С глубоким уважением

Максимова Тагне

[illegible] 04.03.16.

[illegible] 21.03.2016

[illegible]

[illegible]

28.03.2016.

[illegible]

Նորի՜ց ձեզ հետ ենք, ձեր կողքին: Այստեղ ասես մի ուրիշ մարդ ենք դառնում՝ ավելի խոցելի ու միաժամանակ ավելի ուժեղ ու հավատով լցված…Եվ հեռանում ենք այստեղից՝ հույսով լեցուն: Թանգարանն օգնում է մեզ ապրելու, արարելու, դիմակայելու կյանքի դժվարությունները:

Վերադարձե՛ք, տղաներ, մեր երազանքն իրականություն դարձրեք:

***Ժենյա Մնացականյան***

Եվս մեկ հանդիպում՝ Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների հետ: Սրտաճմլիկ պահ է: Նրանց աչքերում միայն սպասում է արտացոլված: Նայելով այդ սպասող ու հույս չկորցնող աչքերին, ուզում եմ ասել. «Սիրելինե՜րս, շարունակեցեք հուսալ ու հավատալ…»: Թող այս գարնանային օրը ձեզ պարգևի առողջություն և էլ ավելի արիակամություն: Վերադա՜րձ ձեր հարազատներին: Աստված բոլորիդ պահապան:

***Փիրուզա Գասպարյան***
***ԱԿԱՀՄ Հադրութի մասնաճյուղի***
***ներկայացուցիչ***
***24.03. 2016թ.***

Ինչ էլ որ ասենք, այս պահին չի ամոքի ձեր վիշտը, ուստի մաղթում ենք պարզապես ամուր առողջություն եւ հույս ու հավատ….

***Անահիտ Ա. Սահակյան, Լ. Ղուլյան,***
***Ք. Հարությունյան, Ն. Աղաբալյան***
***24.03. 2016թ.***

25.03.2016թ.

Ամենքին չէրա ես շատ բարձր
եմ գնահատում ձեր կատարած
աշխատանքները, որոնք են որ ծանո-
թացա ձեզ հետ: Մաղթում ձեզ ջերմ
առողջություն, սեր ու հաջողություններ:
Ու կյանքնականչյանի գրեմ իմ սրտերգերից
որոշ ու նվիրեմ ձեզ..

Հուշարձան

Բյուրավոր մարդիկ ընկան մարտերում,
Հանուն նոր կյանքի, նոր օրվա հանուն,
Օրհնությունն անենք շիրիմին նրանց
Եվ հիշենք նրանց անունն ու անունը:

Հիշենք քաջերին ու կռվել նրանց
Իրենց հայրենի գիրն ու հողը,
Անմահների հանճարները ծաղկեց կարոտ,
Կարոտ ծաղկեց արևի շողը:

Շիրիմին են նրանց, դարձել հուշարձան,
Անմահության կերտողի անունն են կրած,
Եվ հանուն նրանց այս երգն ահա
Այսօր գալիս են ու իրենք գրում:

Լուսինե Նեքրասյան Ք...
Երգչուհի, բանաստեղծուհի

[signature]

Արցա՛խ, իմ հայրենիք... Եղել ես, կաս ու կլինես մերը: Եկել եմ Բուլղարիայից: Ամբողջ բուլղարահայությունը կանգնած է ձեր կողքին, իմ արցախցիներ:

***Արմինե Գրիգորյան***
***Գեորգի Դմիտրով***
***13.04.2016թ.***

Հպարտ եմ մեր տղաներով... Եվ խոնարհվում եմ նրանց ծնած մայրերի առջև: Աստված մեզ հետ է, մեր գործը` արդար և օրինական:

***Զ. Մարիաննա***
***14.04.2016թ.***

Հույս ու հավատով եւ կարոտով սպասում ենք ձեզ, մեր սիրելիներ: Աստված տա, որ բարին կատարվի ու մեր մայրերը երբեք չսգան իրենց կորած զինվորների համար: Խաղաղություն մեր Արցախ աշխարհին: Տղերք, իմացեք, որ սպասում ենք ձեզ...

***Ա. Աղաջանյան***
***Արցախի պետական համալսարան***
***14.04.2016թ.***

Ես զոհված ազատամարտիկ Մարտիկ Վարդանյանի որդին եմ եւ ասում եմ` մենք բոլորս արդարությա՛ն մարտիկներ ենք եւ մեր գործը հասցնելու ենք իր պատմական ավարտին:

***Արման Վարդանյան***
***թ. Վեդի***

Հպարտ եմ իմ մարտական ախպերներով: Մի օր միասին կլինենք հայրենիքում...

***Մայոր Սենիկ Գրիգորյան***
***«Հայոց արծիվներ» դասակի հրամանատար***
***30 պարվիրակի հետ***
***Շիրակի մարզ***

Տպավորված եմ այցից... Երկակի ապրումներ ունեցա՝ սրտի ցավ եւ հպարտություն... Ցավ՝ որովհետև նրանք մեզ հետ չեն, հպարտություն՝ որ նրանց կիսատ գործը շարունակում են այսօրվա մեր հերոս երիտասարդները: Հիացած եմ թանգարանի հարուստ ֆոնդով գեղեցիկ ձևավորված սենյակներով, հետաքրքիր ցուցանմուշներով, տիկին Վերայի սիրալիր ընդունելությամբ: Թող աշխարհում էլ չլինի պատերազմ, ոչ մի մայր չկորցնի որդուն:

***Մարգարիտա Թարանյան***
***«Մարտական խաչ» 2-րդ աստիճանի ասպետ***
***25.05. 2016թ.***

Թող հավերժ խաղաղություն իջնի Հայոց այս եզերքի վրա, եւ տուն վերադառնան մեր անհայտ կորած զավակները:

***Ստեփանավերտի թիվ 12 դպրոցի***
***ուսուցչական և աշակերտական կոլեկտիվ***
***27.05. 2016թ.***

Очень впечатляюще. Просто восхищаюсь прямой наполненной горем, гордостью сердцем Веры Григорян, матери погибшего за светлое будущее нашей Родины.
Очень богатое наследие. Не представляла как много можно сконцентрировать в этом помещении во имя светлой памяти наших воинов.

Շնորհակալություն եմ հայտնում այս թանգարանի աշխատողներին, որ [illegible] [illegible]

7.06.2016թ. Ես այցելեցի այս թանգարանը [illegible]

8.06.2016
LLEGUÉ AL MUSEO RECOMENDADO POR LA OFICINA DE TURISMO. SINCERAMEN-

Հիացած եմ  հեռանում թանգարանից, այն մեծ ջանքերի արդյունք է, ու ես  շնորհակալություն եմ հայտնում նրա  տնօրենին... Թող ոչ մի մայր այլևս արցունք  չթափի ու աչքը  կարոտով չմնա:  Թող մեր հերոս տղաները տուն վերադառնան: Անցած դարի 90-ական թվականների հայ ազատամարտիկների նման հանուն հայրենյաց, հանուն Արցախի հերոսաբար կռվեցին եւ Ապրիլյան քառօրյա պատերազմի հերոսները: Խիզախորեն մարտնչածների թվում էր  եւ շարքային  Ժորա Արթուրի Եսայանը: Պահե՜նք մեր հողերը սերնդեսերունդ...

***7.06.2016թ.***

Լինելով զոհվածի եղբայր,  ես  լավ  գիտակցում եմ, թե ինչպիսի ցավ է զավակ կորցնելը:  Թող լինի այնպես,  տիկին Վերա,  որ  ձեր ու ձեր բախտակիցների աչքերում այլեւս արցունք չերեւա, իսկ եթե երեւա, ապա այն լինի   երջանկության զգացումից ծնված...

***Գեւորգ Միրզոյան***
***12.06. 2016թ.***

Շատ  հուզվեցի,  երբ տեսա ձեր կատարած աշխատանքի արդյունքը:  Մի  պահ  վերապրեցի մեր անցած ցավը: Վստահ եմ, որ այսօրվա մեր այցը թանգարան մեծ հետք կթողնի որդուս սրտում՝ որպես հայրենիքի ապագա զիվորի...

***Էռնեստ և Դենիս***
***20.06.2016թ.***

Մեզ համար  հայտնի ու անհայտ հերոսներ չկան... Ոչ ոք չի մոռացվի, և ոչինչ չի մոռացվելու՝ քանի մեր սերունդներն ապրում են Հայկական լեռնաշխարհում:

***Սառա և Լուսինե***
***23.06.2016թ.***

Խորին շնորհակալություն այն բոլոր մայրերին ու հայրերին, ում որդիները ժամանակին զինվորագրվեցին հայրենիքի պաշտպանությանը եւ մեր ժողովրդին ազատեցին օտարի լծից: Համբերություն մեր անհայտ կորած ազատամարտիկներին, թող լինի մի օր՝ նրանք տուն վերադառնան:

Խոնարհվում ենք տիկին Վերա Գրիգորյանի առաջ՝ այս թանգարանն ստեղծելու համար:

***Երեւանի թիվ 36 դպրոցի 120 աշակերտ***
***26.06.2016թ.***

Մեծ է թանգարանի դերը երիտասարդների ռազմահայրենասիրական դաստիարակության գործում: Նման հաստատությունների կարեւորությունը կայանում է նաեւ նրանում, որ գալիք սերունդը տեղեկանում է, թե ինչով է ձեռք բերվել մեր ազատությունը: Մեզնից յուրաքանչյուրի պարտքն է շարունակել մեր զոհված եւ անհայտ կորած ազատամարտիկների կիսատ թողած գործը: Դրանով իսկ ցույց տալով, որ մենք նրանց չենք մոռացել ու չենք մոռանա:

***Հովիկ Ավանեսով***
***Սփեփանակերփի Մեսրոպ Մաշփոց համալսարանի դասախոս***
***20 ուսանողի հեփ***
***30.06.2016***


27, 06. 2016

Вера, Вам большое спасибо за то, что Вы создали этот музей. Это открывает глаза всем.

Желаю мира и пусть война никогда не повторяется!

Stasia Budaik,
Gdańsk, POLSKA

Łódź, POLSKA

Thank You!

A fascinating museum and memorial to the tragic events that shaped this beautiful nation. Thank you to the people of Nagorno Karabakh for opening their hearts to us!

Jakob van de Wiel, AUSTRALIA

27th June 2016

JAKOBVANDEWIEL@GMAIL.COM.

Dziękujemy za lekcję historii i nadzieję na przyszłość

Pozdrowienia z Polski

Zosia
Borys
Witold
Marta

[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 28.06.16թ.

Բառեր չեմ գտնում արտահայտելու զգացածս...Մեր զոհված եւ անհայտ կորած ազատամարտիկներից յուրաքանչյուրը հերոսության իր բաժինն է իրագործել անցած պատերազմում, ու մեր պարտքն է անպարտ պահել Արցախ աշխարհը: Դա՛ կլինի տղաների հիշատակի պահպանության լավագույն ապացույցը:

***Ասպրամ Շաղյան***
***Հաղրութ***
***04.07.2016թ.***

Սիրելի Վերա, Ձեր հիմնադրած թանգարանը, Ձեր սկսած գործը, Ձեր գաղափարներն այնքան բարձր են եւ սուրբ, որ բառերը տկար են՝ արտահայտելու համար դրանց արժեքն ու ...մեզ տիրող զգացմունքն այս սրահում:

***Գերի Դևոյան***
***04.07.2016թ.***

Ապրումների, զգացմունքների ալեկոծված ծով՝ ահա ինչ եմ զգում այս պահին իմ հոգում...Ձեզ մաղթում եմ ոգու անխոնջելիություն: Հուսով ենք, որ Սպասումը կարդարացնի իրեն:

***Համիկ Մուրադյան***
***08.07.2016թ.***

Մենք եկած ենք հեռավոր Ավստրալիայից և շատ հպարտ ենք մեր Արցախով: Հավատում ենք, որ առանց Արցախի Հայաստան գոյություն չունի: Ձեզ մաղթում ենք առողջություն և հաջողություն:

***Նաշիկ Մկրտչեան, Սոզան Մանճիկեան,***
***Սաֆո Պասմաչճեան***
***09.07.2016թ.***

amazing, and with the help of wonderful organizations like this hopefully one day we can have peace.

Շատ շնորհակալություն.

[redacted] - Արաքսի

不忘历史，要建立一个美好的世界。

中国广州

7/13/2016

[illegible signature]

[illegible] 14/7/16.

Ce musée est un lieu de recueil pour les familles qui ont perdues leurs proches sans savoir si ils sont encore en vie. Je souhaiterais apporter tout mon soutient à ce peuple qui est aussi le mien pour que leurs revendications soient respectés et que la mémoire de ces héros ne soit jamais oubliée.

[illegible signature]

Ichkhan Toumassian

Замечательный музей который я давно мечтал посетить! Спасибо всем героям и тем кто хранит память о них.

26 июля 2016 г. [signature]

Thank you for the tour of your museum! We are grateful that you have kept the memories of these brave people alive, especially our heroes from California.

[signature] 26 JUL 2016

Thank you very much for the tour and visit in your museum. It's very interesting to see and experience the recent and ongoing history of this region.

Kathleen De Bloure, Belgium 28 July 2016

Show good photograph of those during war times. But it would be better if they has english translate so we can understand better.

Thank You for opening the museum for us during your closing times.

23rd July 2016

James Chu Singapore

[illegible]

29/Հուլիսի/2016

Ձեզ համբերություն: Աստված պահի մեր զինվորներին:

***Գրիգոր Երզնկացիան***
***14.07.2016թ.***

Спасибо Вере Григорян за интересный рассказ о судьбе попавших в беду наших героев... Желаю им возвращения на родину и всем- мирного неба.

***А. Оганджанян***
***23.07.2016г.***

Մենք միշտ Արցախի հետ ենք եւ անպայման յաջորդ տարի կը վերադառնանք: Յամազգային ուսանողական հավաքի կողմից շնորհակալութիւն կը յայտնինք ծիզի միզ ընդունելու յամար:

Յաջողութիւ՛ն:

***29.07.2016թ.***

Փա՜ռք պատերազմի մեր նահատակներին, անհայտ կորածներին ու ծով համբերությամբ որդու սպասող բոլոր մայրերին:

Երանի՜ հրաշք լինի ու մեր անհայտ կորածները բռնեն վերադարձի ճամփան:

***Նարինե Մայակյան***
***30.07.2016թ.***

Մեր հարգանքի տուրքն ենք մատուցում ձեզ, տղանե՛ր...

***Սամվել Հայրապետյան***
***Ռոբերտ Հախվերդյան***
***Ամերիկա-Կանադա-Լիբանան-***
***Գերմանիա-Մոսկվա***
***«Հայ ռայդեր» մոտոցիկլետային ակումբ***
***30.07.2016թ.***

Հիշողությունն ու տպավորությունները մեզ տեղափոխեցին 90-ական թվականներ... Նորովի վերապրեցինք այն մայրերի վիշտը, որոնք կորցրել են իրենց զավակներին:

***Սեւակ Թանյան***
***Դերենիկ Պողոսյան***

Ամեն անգամ Արցախում հոգիդ թելադրում է քայլել դեպի այս թանգարանը, որտեղ քեզ դիմավորում է տիկին Վերա Գրիգորյանը:
Իմ այս այցի ընթացքում թանգարանում կային շատ այցելուներ, ու նրանք իրենց հետ տարան հեղինակի 19 գրքերից մեկը, որ «Վշտի և հույսի խաչմերուկ» վերնագիրն է կրում... Աստված պահապան բոլորիս:

***Արարատի քաղաքապետարանի***
***Մշակույթի և սպորտի բաժնի պետ***

Միտքս ամեն վայրկյան իմ երկու զինվոր որդիների հետ է, որոնք այսօր իրենց զինակից ընկերների հետ պահպանում են Արցախ Աշխարհը՝ Հայաստանի դարպասը: Հպարտությամբ եմ գրում. այսօր տեսա իմ որդուն՝ ապրիլյան պատերազմի

մասնակից եւ «Քաջարի մարտիկ» կրծքանշանի արժանացած զինվորին:

Մտածում եմ. այս տղաների մայրերի միտքն էլ է տարիներով իրենց որդիների հետ, որդիներ, որ տառապում են անհայտ հեռուներում...Համբերություն նրանց եւ բախտի լույս, որպեսզի մի օր կարողանան գրկել իրենց զավակներին: Խաղաղություն Արցախ աշխարհի մարդկանց եւ ամեն մի քարի ու թփի...

***Գառնիկ Մարգարյան՝***
***Արարատից***
***30.07.2016թ.***

Արդեն մի քանի տարի է, ինչ ԵՊՀ «Վարդանանք» ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբն այցելում է այս թանգարանը: Կարևոր և նպատակային այս այցը ուխտագնացության կարևոր մասն է կազմում: Մեր երիտասարդները պետք է հաճախ այցելեն այս թանգարանը, քանի որ ամենամեծ հայրենասիրությունը հայրենյաց զինվորին սիրելն է...

Թող այս պատերի լուսանկարները գնալով նվազեն...

Փառք ու հիշատակ մեր հերոսներին:

***ԵՊՀ «Վարդանանք» ՌՀԴԱ***
***30 հոգով***
***04.08.2016թ.***

Հարգարժան տիկին Վերա

Դուք և Ձեր համախոհերը փորձում եք անհայտ կորած ազատամարտիկների և տարբեր պատճառներով անհայտ կորած մարդկանց գտնել վերադարձնել իրենց ընտանիքներին... «Վարդանանք» ռազմահայրենասիրական ակումբի անդամները նույնպես մասնակցում են այդ գործին, քանի որ ԵՊՀ

ռադիոֆիզիկայի ֆակուլտետի անհայտ կորած ուսանող Արա Ալեքսանյանի հիշատակի օրը /հունիսի 28/ կազմակերպում ենք այց Եռաբլուր ու Պանթեոն և այնտեղ բոլոր անհայտ կորածներին անուն առ անուն հիշելով՝ փորձում անմահացնել գոնե նրանց անունները, քանի որ զենքը ձեռքին պատերազմական պայմաններում են անհայտ կորել: Թող Ձեր արած գործը «վարակի» հայ երիտասարդներին...

***Սաբենիկ Աբրահամյան***
***ԵՊՀ ուսանող ազատամարտիկների հիշատակի***
***«Վարդանանք» ակումբի նախագահ***
***04.08.2016թ.***

Երբ առաջին անգամ ոտք դրի այս շենքի աստիճաններուն, զգացումս անբացատրելի էր, կը յուսամ անպայման ու արագ վիրադարձը այս կորած ազատամարտիկներու...

***Սալբի Մուրաին***
***10.08.2016թ.***

Մենք ձեզ երբէք չենք մոռնար ու միշտ կը յիշինք, փառք ձեզ, խոնարհ հերոսներ: Հպարտ ենք ձեզնով, մեր սիրելի ազատամարտիկներ: Այս թանգարանով ձեր յողը պիտի մնայ մինչև վիրջ:

***Յոլեր Գալայեան***
***Լիբանան, Պեյրութ***
***10.08.2016թ.***

Հայ պատմությունեն մենք շատ լսած ենք Արցախը-Ղարաբաղը: Երազ մըն էր ինծ համար տեսնիլ Հայաստանը և Ազատ Անկախ Միացյալ Արցախը: Շատ հպարտ կը զգամ Հայ ըլլալու և իմ անձնական ուխտը պիտի ըլլա, ինչպես ամեն հայ զավակի համար քարոզել, մխիթարել հայն ու օտարը այցելելու և ծանօթացնելու համար Հայստանն ու անկախ Արցախը: Սպասում ենք անհայտ կորածներուն: Տղա՞յք, մի թողնեք մեզ:

***Գալին, Գուրգեն, Մկրտիչ***
***10.08.2016թ.***

Շատ բարեր սկացածները չունիմ, բայց կասէմ դէ Տէրը ողորմի մեր հայ զինվորներին ու հայ մայրերին:

***Սիրվայ Յակոբեան***


Des dels Països Catalans fins al Karabakh per conèixer la realitat del poble i la seva gent. Ens ha agradat molt de poder ser aquí i poder compartir aquests dies en aquest fantàstic lloc al bell mig del Caucas. Vagi per les persones lluitadores d'arreu! Vagi també per una resolució del conflicte que centri el seu desenvolupament en la dignitat humana.
MONTSE VENTURÓS i ORIOL PLANA
Dijous, 11 d'agost de 2016

Թող Աստվածամոր հոգու լույսերը վառ պահեն բոլորիս հույսերը եւ լուսավորեն ձեր որդիների՝ մեր հերոս-տղաների վերադարձի ճանապարհը:

***ՀՀՅ կանանց խորհուրդ՝***
***25 հոգի***
***12.08.2016թ.***

Մենք ձեզ երբեք չենք մոռանա, հարազատ տղաներ, դուք անմահ եք, ձեր սխրանքների շնորհիվ մենք հիմա ապրում ենք ու ձեզ մեծարում:

***Բ. Մնացականյան***
***Երևան***
***16.08.2016թ.***


Solidaryzujemy się z rodzinami żołnierzy zaginionych w walkach
z Polski
(Poland) Cracow
15.08.16

Կը հավատամ՝ մեր բոլոր կորած ազատամարտիկները անբացատրելի զոհողություն են տարել մեր պայքարին մեջ: Արեամբ կերտուված հողը ծաղկեցուցած էն իրենց գերագոյն նվիրումով: Բոլոր սրտով կըզգամ նրանց հերոսալի ծնողներին, գիտեմ, որ կը գան տղաները, նորից կը տեսնենք իրենց: Մեր պայքարը կը շարունակվի, ավելի ուժեղները կուգան...

***19.08.2016թ.***

Հերոսների սխրանքն ու անձնազոհությունը պարտավորեցնում են մեզ լինել լավ քաղաքացի, հայրենասեր, կառուցել արդար հասարակություն: Զոհված կամ անհայտ կորած ազատամարտիկների հիշատակը պահելու լավագույն ձևը նրանց գործը շարունակելն է՝ արդեն խաղաղ պայմաններում:Նրանք

մեզ սովորեցնում են լինել հայրենասեր, լինել ազնիվ, գործի մեջ՝ պարտաճանաչ: Միայն այս հատկանիշները մեր մեջ զարգացնելով, միայն արժանապատիվ կյանքով ապրող հասարակություն ձևավորելով կարող ենք արժանի լինել նրանց հերոսությանը:

***Ավետիք Մեջլումյան***
***20.08.2016թ.***

Очень тронуты...глубоко скорбим...Склоняем головы перед памятью погибших и безвести пропавших воинов.Спасибо тем, кто отдал свою жизнь за освобождение Арцаха, за жизнь народа армянского. Мы не живем в Карабахе, но наши корни отсюда, с этой Великой земли... и мы гордимся этим и ощущаем себя частицей Арцаха. Огромное спасибо сотрудникам Музея и лично его основателя- Вере Григорян, за то, что сохраняется Память, что у нас есть возможность посетить такой музей. Никто не забыт и ничто не забыто. Мы верим в окончательную Победу Арцаха!

Мирного неба нашей родине.

***Светлана и Гаянэ Пашаяны***
***20.08.2016г.***

Սրտանց հուզված ենք և միևնույն ժամանակ հպարտությամբ լցված: Շնորհակալություն, որ հանձնառում եք այս ծանր ու արժեքավոր աշխատանքի...

***Նելլի Ղևոնդեան***
***Սիդնի Ավսպալիա***
***22.08.2016թ.***

Հպարտության զգացում ապրեցի: Շնորհակալություն այսպիսի թանգարան ստեղծելու համար:

***Լիլիթ Մելիքեան***
***23.08.2016թ.***

Խոնարհվում եմ մեր քաջերի հիշատակի առջեւ: Դուք անմահ եք:

***Արման Գաբրիելյան***
***23.08.2016թ.***

Խոնարհվում եմ...

***Անուշ Փափազյան***
***23.08.2016թ.***

Առաջին անգամն ենք Արցախում: Հպարտ ենք և հուզված: Ապշած ենք արցախցիներիդ հոգեկան արիությունից, ուժից եւ ապրելու մեծ կամքից: Խոնարհվում ենք մեր բոլոր նահատակների առաջ: Հպարտ ենք, որ հայ ենք: Եվ շնորհակալ ենք ձեզ:

***Ավետիսյան Մերի (Հայաստան)***
***Լուսինե Նազար (Պարսկաստան, Թեհրան )***
***23.08.2016թ.***

Անչափ շնորհակալ եմ տիկին Վերա Գրիգորյանից, որ այսպիսի թանգարան է ստեղծել:

***Գագիկ Գրիգորյան***
***25.08.2016թ.***

Ցուսով ենք, որ մեր տղաները մի օր կազատվին դաժան թուրքի ձեռքից:

***Գաբրիել Աղամեան Այնճար, Լիբանան***




*Անհայտ կորած ազատամարտիկների մայրերը հուշաթանգարանում:*




*Հերթական աջակցություն Մարտակերտի մասնաճյուղի ներկայացուցիչ, երկու անհայտ կորած ազատամարտիկների ծնողներին:*



*Ուխտագնացություն: Հանուն կորածիդ վերադարձի պապրասատ ես աղոթել սուրբ քարի էլ, ծառի էլ...*



*Հետաքրքրվողին ցույց տալու շա՜տ բան կա...*



*Պետության ղեկավարի ուշադրությունը կազմակերպության եւ հուշաքանգարանի նկատմամբ այստեղ շատ են արժեւորում...*



*Հուշամատյանում գրառում կատարողը Արսեն Մանասյանն է, որը շատ է հանդես եկել բարեգործական սատարումով: Ժողովրդական օրհնանք է՝ փվողի բուռը միշտ լիքը լինի...*



***Եվ հարցերն են շատ, եւ պատասխանները...***




***Հաճելի է երիտասարդների հետ գործ ունենալը:***






*Երիտասարդների այցը Հուշաթանգարան...*



*Ուրիշ է, երբ ինքդ ես գնում երկրի թիվ 1 պաշտոնյայի մոտ, եւ ուրիշ՝ երբ ինքն է գալիս փեղում լսելու եւ պահանջված հարցերի լուծմանն ընթացք տալու..*



*Նայիր՝ եւ պատերազմին «ո՛չ» ասա՝ նրան պատրա՛ստ լինելով ...*





*Անմոռաց պահ ու փպավորություններ...*



*ԱՀ ՊԲ ՌՀԲ սպա, մայոր Դավիթ Օհանջանյանը ակտիվ համագործակցության համար պարգեւատրվել է ԱԿԱՀՄ «Հայրենիք եւ հավատ» մեդալով:*



*Լիբանանահայ Սեւակ Տիմիրճեանը (աջից) հորեղբոր հետ:*



*Բարոնուհի Քերոլայն Քոքսն իրն է եկել «պղաներին պեսությաև»:*
*Ե՛ւ փխրության վայրկյաններ, և՛ լուսավոր պրամադրության*
*ու անգամ ժպիտի:*



*Եվ նորից Կոքսը՝ նոր այցով, իր գաղափարակիցների հետ...*



*Ցուցանմուշները զինվորական այս բարձր աստիճանավորներին որոշակի խոհի են մղում: Նրանք ամենքից լավ գիտեն խաղաղության արժեքը, որովհետեւ նույնքան ամեն լավ էլ գիտեն ինչ է պատերազմը...*



*Բարոյական սատարման պահեր ...*



*Բարոյական սատարման պահեր ...*



*«Ամարաս» տպարանի տնօրեն Արկադի Ասրյանը սերտ համագործակցողներից է:*




*Մտքերի կիսում հեռուստալրագրողի հետ եւ... նոր հեղինակային տողեր հուշամատյանում:*



*Սրտով, մտքով ու գործով հարազատ բանակի հետ:*



*Վ. Գրիգորյանի հեղինակած «Վշտի եւ հույսի խաչմերուկ» գրքի շնորհանդեսին:*



*ԱԿԱՀՄ է ժամանել հանրապետության առողջապահության նախարարը՝ անձամբ բժշկական սարքեր ու պարագաներ հանձնելու կազմակերպության բուժկետին, ծանոթանալու թանգարանին եւ իր մակագրությունը թողնելու հուշամատյանում:*



***Եկել են պատերազմից տուն չդարձած իրենց մարտական ընկերների հանդեպ հարգանքի տուրք մատուցելու...***



***«Արաբո» ջոկատի տղաների հարազատները:***



***Արցախի հերոս Յուրի Պողոսյանի փիկնոջ եւ որդու հետ:***



***Պահ հիշատակի եւ փուրք  հարգանաց՝ ամենաբարձր մակարդակով: 2016թ. հունիսի 29:***




*«Սապարում հարազատ բանակին» կոչի Նախաձեռնող խմբի այցերը ՊԲ զորամասեր , որպես կանոն, մեկնարկ են վերցնում հենց ա՛յս շեմից՝ ԱԿԱՀՄ գրասենյակի և հուշաթանգարանի մուտքից:*



*Պահ «Հուշամատյան-2» գրքի շնորհանդեսից:*



*Համագործակցություն...*




*Ծնորհանդեսից հետո...*



*Դժվար է նայել եղբորդ աչքերին, երբ նա անհայտ հեռուներում է…*




*Անհայտ կորած ազատամարտիկի դուստրը՝ հորն ու նրա բախտակիցներին նվիրված, նոր լույս տեսած հիշատակի օրացույցով:*



*Հանրապետության նախագահի տեղեկատվության գլխավոր վարչության պետ Դավիթ Բաբայանը ԱԿԱՀՄ հուշաքանգարան արտասահմանից եկած հյուրերի հետ:*




*Համագործակցական այց հանրապետության հասարակական ու երիտասարդական մի շարք կազմակերպությունների ղեկավարների կողմից:*



*Հանդիպում հուշաքանգարանում ՀՀ Դիվանագիտական դպրոցի ուսանողների եւ դասախոսների հետ:*



*ՀՀ դիվանագիտական դպրոցի փնօրեն Վահե Գաբրիելյանը սաների հետ հուշաքանգարանում:*

Անչափ յուզիչ այս թանգարանէն միայն մէկ բան կարելի է հասկանալ՝ Հայրենիքը սուրբ է, պետք է լավ պահենք մեր հողերը:

***Յովիկ Անապեան***
***Այմեսը***
***01.09.2016թ.***

Տեսա մեր հերոս տղաների լուսանկարները, եւ անչափ խորն է հուզմունքս: Այս պահին միայն մի երազանք. թող մեր բոլոր անհայտ կորած տղաները դառնան տուն, ապրեն երկար, թող այլեւս ոչ մի մոր աչք չմնա որդու ճանապարհին...:

***Ոսկեհատ Ալեքսանյան***
***Ք.Էջմիածին***
***01.09.2016թ.***

Արցախյան պատերազմի մասնակից զինվորներից նույնիսկ մեկին մոռանալը կամ նրանց հիշատակն արժանապատիվ չպահելը կլինի մեր պատմության անցանկալի ու վտանգավոր ոլորանը… Շնորհակալություն, որ ապագա սերունդների համար ստեղծել եք այսպիսի հիանալի թանգարան:

***Արզիկ Պետրոսյան***
***07.09.2016թ.***

Միայն մի բան պիտի ասեմ. մեր ժողովուրդը պիտի հանգիստ քնի, որովհետեւ մենք՝ զինվորականներս, արթուն ենք...

***ԱՀ ՊԲ 1-ին ՊՇ***
***25 ապա***

7.09.16 Wojna to straszna rzecz. Do niczego dobrego nie doprowadzi, tylko do cierpienia.
Wystawa poruszająca, uświadamia, że najbardziej cierpią zwykli ludzie, którzy utracili ojca, mamę, syna...
Przepięknym symbolem jest obrazek przedstawiający dwie matki – ormiańską i azerską. Obie cierpią tak samo po utracie syna. Dobrze, że wystawa powstała. Mamy nadzieję, że może dzięki niej do niektórych dotrze gorzka prawda, że wojna to samo zło.
Życzymy wszystkim Ormianom, Karabachom i Azerom, żeby ten węzeł gordyjski kaukazkiej polityki został jak najszybciej rozcięty. Aby ludzie mogli żyć w pokoju.

Mariusz i Agnieszka
Polska, Piastów k/Warszawy

[illegible]

[illegible]

09.09.16 թ.

ՊԲ 9-րդ պաշտպանական շրջանի թվով 16 զինծառայողներս խոնարհվում ենք մեր բոլոր անհայտ կորած ազատամարտիկների ընտանիքների հոգեկան արիության առջև...

Փառք նրանց, ովքեր ընկան կռվում, եւ նրանց՝ ովքեր անհայտ հեռուներում են եւ իրենց համար դեռ չի վերջացել պատերազմը...

***Լեյտենանտ Սիլվա Հովհաննիսյան***
***09.09.2016թ.***

Մենք ուզում ենք ասել անհայտ կորած հերոսների վարձքն ի կատա՞ր... Փառք քեզ, հայ զինվոր:

Ծառայում ենք Հայաստանի Հանրապետությանն ու Արցախին:

***Հոռաթաղի 1-ին դասակի հրամանատար***
***աղջիկների անունից՝***
***Մ.Եզեկյան***
***09.09.2016թ.***

Շնորհակալություն թանգարանի տնօրինությանը,որ մոռացության չեն մատնում մեր անհայտ կորած զինվորներին:

***Լեյտենանտ Արսենյան 49.971 ԶՄ***
***Լեյտենանտ Ղազարյան 49.971 ԶՄ***
***Լեյտենանտ Բաղդասարյան 741455***
***10 ԼՀԴ 20 հոգի***

Փառք մեր բոլոր անհայտ կորած ազատամարտիկներին: Խոնարհվում ենք նրանց բարի հիշատակի եւ նրանց սպասող ընտանիքների առջև...

***Շուշիի ՌՏԳ-ի 20 սպայի անունից՝***
***լեյտենանտ Դավիթ Լալայան***
***09.09.2016թ.***

We continue to pray and work that freedom and human dignity, belonging to us all as children of God, may be honoured. And that these persons may be returned to the love of their families. Fr. David Thomas from Wales
24/9/16

Its hard to put in words all the emotions and feelings that the museum bring and the stories bring to my life. Thank you for sharing. I pray for you and for all the missing people. The armenian community, I will bring back my experience to my home town Cordoba - Argentina.
Thank you. Carolina from ~~HART~~ (argentina)

An interesting exhibition that demonstrates the real history. Ed. 26/09/16

07-10-2016 [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

Přejeme vám hlavní mír a klid a spása vaší duši.
Wonderfull. Thank you for your explor.
JITKA A MILA CZECH REPUBLIC
10 - october 2016


27.12.16թ.

27/12/2016

Prayers for those who had lost their lifes during the war.
Hope that there will be same English translation so that more people can understand the history.

from Singapore.

Կրկին անգամ այցի ենք եկել Արցախի ԱԿԱ հուշաթանգարան՝ գեթ մեկ անհայտ կորածի վերադարձի աչքալուսանքի ակնկալիքով՝ ավա՜ղ... Անչափ դաժան է մեր թշնամին:

ԱԿՐՈՍՏԻՔՈՍ

Գրվել է թանգարանը հիմնադրած Վերա Գրիգորյանի միակ որդու՝ անհայտ կորած ազատամարտիկ Սպարտակի հիշատակին, բայց բովանդակությունը վերաբերում է հեռուներում տառապող մեր բոլոր տղաներին:

Սպասումի շա՜տ երկար տարիներ.
Պատերազմից ետ օրերն այնպես են
Անցնում շարանով՝ թվում են անվերջ,
Րոպեն կրծում է հույսը հոգուդ մեջ,
Տառապանքն է բանտում քեզ գրկում,
Ավետիս չկա, հետդարձի վկա,

Կարոտն է տերը ծնողիդ սրտի,
Ինչպե՞ս դիմանա մայրն այդ ամենին,
Նորից տու՜ն դարձիր, դյուզազուն որդի:

***Սուսան Հայկյան՝***
***ՀՀ ԿԳՆ Արարատի պետական քոլեջի դասախոս,***
***Գառնիկ Մարգարյան՝***
***Արարատի քաղաքապետի օգնական,***
***երկու զինվորի հայր***
***04.01.2017թ.***



Մե՜ծ ջանքեր ու համբերություն է պետք՝ ստեղծելու Միություն, որտեղ կլինեն այսքան պատմություններ և փորձառություններ: Անգնահատելի և աննկարագրելի արժանիք է Ձեր արարքը, տիկին Վերա: Շատ զգացված եմ Ձեր ապրումակցելու բարձր կարողությունից, կանացի զորեղությունից և համբերաշխության կամքից: Հուսով եմ, թե մի օր այս պատմությունները կդառնան անցյալ և տուն վերադարձած տղաները մեզ հետ խաղաղ ներկա կկիսեն:

***Արփի Բաղյան,***
***«Սեւազգեստ կանանց***
***նախաձեռնություն»***
***23.01.2017թ.***

Շնորհակալություն բոլոր այն մարդկանց, ովքեր հիմնել են այս թանգարանը: Երանի՜ բոլոր անհայտ կորածների ճակատագրերը հայտնի դառնան, տղաները վերադառնան: Մեր այցելությունից շատ տպավորված և հուզված ենք: Շնորհակալություն հարուստ ու հետաքրքիր տեղեկությունների համար: Մենք այս այցելությունը երբեք չենք մոռանա:

***Խնապատի Արթուր Հայրապետյանի անվան***
***միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի 25աշակերտ***
***27.01.2017թ.***

Շնորհակալ ենք մեր բոլոր ազատամարտիկներից, հպարտ ենք նրանց անցած մարտական ուղիով, ցավում ենք, որ տղաների մի մասին շատ դժվար բախտ վիճակվեց...Մենք նրանց չենք մոռանում: Մեր բոլոր ազատամարտիկների շնորհիվ է, որ ապրում, ծառայում ենք ազատ ու անկախ երկրում:

***27 զինվոր***
***02.02.2017թ.***

Շնորհակալ ենք Վ. Գրիգորյանին ջերմ հանդիպման համար: Համբերություն եւ ուժ ենք մաղթում...

***ՀԱԱՀ Շուշիի մասնաճյուղի***
***3-րդ կուրսի 30 ուսանող***
***07.02.2017թ.***

Ձեր գործն անմահ է, մեր հերոս եղբայրներ: Մենք ձեզ երբեք չենք մոռանա:

***Ա. Հարությունյան***

Thank you for showing us this terrible war.
I'm sorry that it happened. God bless you all.
-Brent USA

Բառերով չեմ կարող նկարագրել տպավորություններս, ուղղակի թող նկարների քանակը չավելանա, այլ պակասի, և ոչ մի մոր աչք թող չմնա զինվոր որդու ճանապարհին...

***Թիվ 46492 զորամասի***
***18 զինվորի անունից՝***
***Հարություն Աարյան***
***01.03.2017թ.***

Մեր անմահ զինվորներ, դուք, յուրաքանչյուրդ, հայի սրտում եք, հայի աղոթքներում, եւ հայոց սեղանի առաջին կենացակիրն եք...Մեր շարքերից դուք միայն ֆիզիկապես եք բացակա, ապրում եք յուրաքանչյուր հայի սրտում:

Մենք ձեզ սպասու՜մ ենք…

***Ձեր իրանահայ հայրենակիցներ՝***
***Էդմոնդ, Շողիկ, Սարգիս, Սեւան,***
***Շաղիկ Աբեդիններ***
***22.03.2017թ.***

Մե՜ծ ցավով այցելեցի այս թանգարանը: Շատ հայրենանվեր աշխատանք է կատարվել այստեղ: Առանց արցունքի նարավոր չէ շրջել ցուցասրահում... Կուզենայի, որ հաջորդ այցիս տղաներից բոլորից բարի լուր լինի...

***Մարիամ Սարգսյան***
***Երևան***
***22.03.2017թ.***

«Ֆիզիկա 1» ֆիզիկայի ուսուցիչների նախատեստացիոն խմբով եղանք ԱՀ ԱԿԱ հուշաթանգարանում եւ տպավորված ենք կատարված ահռելի աշխատանքով, ցուցանմուշներով:

Վերհիշեցինք Արցախյան պատերազմի արհավիրքները... Հասկանում ենք անհայտ կորած զինվոր տղաներին անսահման կարոտով սպասող մայրերի հոգեվիճակը... Մենք ձեզ հետ ենք, թանկագիններս:

***Լ.Առուշանյան, Ն. Շահնազարյան, Մ.Արզումանյան,***
***Մ. Բաբայան,Ն. Պետրոսյան, Մ. Անդրեասյան,***
***Շ. Բեգլարյան, Ռ. Հայրապետյան***
***28.03.2017թ.***

Շնորհակալություն եմ հայտնում տիկին Վերա Գրիգորյանին հուշաքանգարանը նման մակարդակի ձևավորելու և պահպանելու համար: Մաղթում եմ մեր բոլոր անհայտ կորած ազատամարտիկների ընտանիքների անդամները լինեն մշտապես առողջ ու հաջողությունների մեջ:

***Կ. Աբայան***
***ԱՀ առողջապահության նախարար***
***03.04.2017թ.***


11.04.2017 CHWAŁA BOHATEROM!
TSAVET TANEM
Tomasz i Joanna
POLSKA

شكراً من الكويت ، فهد
Thanks from Kuwait, Fahad 12/4/2017

14/4/2017

ՊԲ թիվ 46492 զորամասի տանկային գումարտակի զինծառայողներս եկել ենք օգնելու տիկին Վերա Գրիգորյանին: Թանգարանի հատակը պետք է քանդեն և սարքեն նորից, հույս ունենք, որ մյուս այցի ժամանակ այն կլինի փայլուն վիճակում, բոլոր աշխատանքներն ավարտված: Ի՜նչ լավ է, որ կան հայրենասեր ու ազգանվեր աշխատանք կատարող մարդիկ:

***Կրպսեր սերժանտ Շահնազարյան Վլադիմիր եւ շարքայիններ՝ Մելքոնյան Արմեն, Մարինյան Արման, Սահակյան Վահե, Կյուրեղյան Գարեգին, Մելքոնյան Արմեն, Հովաննիսյան Էրիկ, Մալխասյան Հարութ***
***14.04.2017թ.***

Հերոսները չեն մահանում, ըլլան անոնք զոհված ռազմադաշտի վրայ, պարտականության ճամփի ընթացքում կամ հայ ընտանիքը պահելում: Հերոս է ան, որ համոզված իր կռվին արեան գնով կը պայքարե՝ իր նպատակին հասնելու կամ պահպանելու իր գաղափարին, որին համոզվաած է: Կը վստահեցնեմ այն անհայտ հերոսներուն, թե իրենց նպատակը իրականացած է՝ ազատագրեցին Արցախը, պահպանեցին հայ ընտանիքները, եւ իրենք հերոսներ են:

Կը խոստանանք իրենց գործը շարունակել սերնդեսերունդ:

Կանք, կմնանք ու դեռ շատանանք...

***Երջանիկ Նանօր Վարամի***
***Արենի Գասպարյան***
***20.04.2017թ.***

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր այն մարդկանց, ովքեր աջակցեցին այս թանգարանի իրագործմանը: Անհայտ կորած զինվորներն իրենց կյանքը նվիրեցին հանուն ազատության և անկախության: Մենք հպարտ ենք, որ ունենք նման

թանգարաններ, որոնք երբեք չեն թողնի, որ մեր սերունդները մոռանան մեր անցյալը: Անչափ զգացված ենք և շնորհակալ ձեր կատարած աշխատանքից:

***Սպեփանակերփի թիվ 3 դպրոցի***
***5 ա դասարան (30 հոգի),***
***դասղեկ՝ Լ. Ազրյան***
***30.04.2017թ.***

Մենք Արցախ ենք ժամանել Աբովյան քաղաքից ու մեզ համար մեծ պատիվ ենք համարում այստեղ գտնվելը... Եկել ենք բարեգործական ծրագրի մասնակցելու: Երեք օրվա ընդացքում եղանք 3 տարբեր զորամասերում՝ Մարտակերտի շրջանում և «Հայկազով» տեղամասում: Մեզ համար իրո՛ք շատ կարևոր է Արցախը: Քանի որ մենք հիմա այստեղ ենք, առանց մի վայրկյան մտածելու ասացինք չենք հեռանա այստեղից՝ մինչև չտեսնենք զոհված ու անհայտ կորած հզոր տղաների նկարները...Չէ՞ որ այսօրվա խաղաղ կյանքով բոլորս պարտական ենք նրան:

***«Նազենիկ» և «Ժպիփ» պարային համույթների***
***25 սան ու ղեկավար՝ Արդա Մկրփչյան***

Դժվար է նկարագրել մեր տպավորությունները, դժվար՝ նայել այն մարդկանց աչքերին, ովքեր իրենց որդիների կարոտն առնում են, ավա՜ղ, նրանց նկարներից... Անհայտ կորած ազատամարտիկների բոլոր ընտանիքներին մաղթում ենք առողջություն եւ համբերություն:

***ՊԲ 46492 զ/մ 80 զինծառայող***
***24.05.2017թ.***

ՊԲ 4-րդ ՊԾ անձնակազմի և իմ անունից հայտնում եմ մեր գոհունակությունն ու շնորհակալությունը թանգարանի տնօրինությանը:

Ցանկանում ենք բոլոր անհայտ կորածներին բարի վերադարձ հայրենի օջախ, իսկ նրանց սպասողներին՝ անսահման համբերություն:

***Վ. Նազլուխանյան***
***թիվ 34153 զ/մ-ի 100 զինվոր***
***18.05.2017թ.***

Հուզված եմ, շա՜տ: Այստեղ, այս պահին վճռեցի. կընտրեմ սպայի (զինվորականի) մասնագիտություն... Եթե թուրքը մի անգամ էլ փորձի հային ցավ պատճառել, կպատժվի անշրջելիորեն:

***Ղազարյան Եվա***
***18.05.2017թ.***

Մենք կը խոնարհվենք ձեր սխրանքին ու ցավին առջեւ: Մեր աղոթքները՝այս հերոսներուն և իրենց ընտանիքներուն: Իրենց այս զոհաբերությամբ է ազատ այս գեղեցիկ հողը:

Կը մաղթենք խաղաղություն մեր այս ու բոլոր սերունդներին:

Տղաների հիշատակը կմնա անմահ:

***Նիրվա Ֆէրէշեթյան Գազանճիան***
***Էպպի Գաբրիէլ Գազանճիան***
***Արի Վզազէն Գազանճեան***
***Րաֆֆի Գազանճեան***
***22.06.2017թ.***

26.06.17г.

С большой любовью и огром-
ным чувством удовлетворения
прошла по всем комнатам
этого святого места. Боль в
сердце, но оптимизм и вера
в хорошее будущее, мирное
небо без войны, „хозяйки этого
святого дома" своей энергией
и прямотой добивается многого.
Мы все должны помнить обо
всех пропавших безвести и вери
в их возвращении.
Опускаю свою голову перед
всеми пропавшими безвести

дир. муз.уч. Дадамян К. А.

26.06.17г.

Сердце плачет, душа разрывается
от боли, но я горжусь что живу
на этой святой земле.
Я верю в светлое будущее наших
детей, я преклоняю свою голову
перед нашими безвести пропавшими
ребятами.

Степанян Г. А

Թող որ այսպիսի թանգարան այլևս չբացվի...Թող որ շատ շուտով այս թանգարանի անհայտ կորած մեր հերոսները գտնվեն, ու խաղաղվեն նրանց հարազատների մտքերն ու հոգիները:

***Էրիկ, Նելլ, Լյուդմիլա, Մաքսիմ, Գոռ, Էրիկ***

Թող միշտ մնաք հզոր ու միշտ հպարտ, մեր արիւնը քող ըլլա կեանք, մեր պատիվը բարձր պահենք, Հայոց բանակ:

***Գեորգ, Վանի , Սաք , Լիանա Եփրիկյան***
***Սիրիա***
***06.07.2017թ.***

Սիրելի զինվոր, աղոթքս՝ առ Աստծված, որ շուտով տուն վերադառնաս: Արցախդ ազատ՝ Արցախդ ծաղկում է:

***Սոֆյա Ավագյան***
***ՀՀ պետական կառավարման ակադեմիա***
***Գեորգ Կիրակոսյան***
***Օլգա Բուդանովա - Կիրակոսյան***
***13.07.2017թ.***

Երկրորդ այցս է Արցախ, ու ոչ-ոք չի կարող պատկերացնել, թե ինչ եմ զգում… Այստեղ ամեն մի ժայռի, ամեն թփի մոտով անցնելիս սիրտս փառավորվում է, հայրենիքի հանդեպ սերը խլրտում կրծքիս տակ: Հիշողությամբ ու աղոթքով առ Աստված, եւ, անշուշտ՝ գործով, միշտ քեզ հետ ենք, ՀԱ՜Յ ԶԻՆՎՈՐ:

Երանի՜այն օրվան, երբ կհաջողվի նորից վերադառնալ այս երկիրը:

***Ռուբեն Պապյան***
***Բեյրութ, 15.07.2017թ.***


14/7/17
From AYF Youth Corps 2017, Group 1.
We are proud to know our martyrs are never forgotten,
thankyou for maintaining their memory.

Հպարտ ենք ու ոգեւորված այսօր, որովհետեւ Արցախում ենք՝ հերոսների հողում… Այս թանգարանը շա՜տ հուզեց մեզ, թող բոլոր անհայտ կորածները գտնվեն եւ տուն վերադառնան: Մենք ավելի թափով ենք շարունակելու մեր ու ձեր սուրբ գործը, հարգելի ընկերներ:

***ՀՅԴ Զավարյան ուսանողական միության***
***50 ընկերների անունից***
***Բեյրութ, Լիբանան***
***16.07.2017թ.***

Փառք ու պատիվ մեր անմահ հերոսներին: Խոնարհում ենք գլուխներս…

***ՀՅԴ Իրանի Սպահան քաղաքի Ռուբեն երիտասարդական միություն (15 հոգի)***
***18.07.2017թ.***

Այսօր Համազգայինի 2017 թվականի խումբը 22 հոգով, այցելեց Արցախի ԱԿԱ հուշաթանգարան:

***20.07.2017թ.***

Նրանք թողեցին իրենց ընտանիքներին, հարազատներին՝ իրենց կյանքը նվիրելու հայրենիքի անկախությանը , ու հետ չդարձան... Նրանց անունները վառ կմնան հայ ժողովրդի սրտում:

***Խաչիկ Սուքիասյան***
***20.07.2017թ.***

Շնորհակալություն մեր հերոս տղաների հարազատներին: Եկեք չկորցնենք հավատը, նրանք կվերադառնան. եթե ոչ այսօր կամ վաղը, ապա՝ երբեւէ: Ապրե՛նք այդ հույսով:

***Արամ Պողոսյան***
***20.07.2017թ.***

Հերոս չեն ծնվում, հերոս դառնու՛մ են:

***Հ. Ավետիսյան***

Չգիտեմ անգամ ինչից սկսել…Եվ հպարտ եմ, եւ տխուր, եկեք շնորհակալություն հայտնենք այս տղաների հարազատներին եւ հատկապես՝ մայրերին, որոնցից մեկն էլ այս թանգարանն ստեղծած Վերա Գրիգորյանն է: Ուժե՛ղ մայր՝ որովհետեւ կարողացել է ստեղծել այս ամենը: Վերադարձե՜ք, տղաներ…

***Սուսաննա Հակոբյան***
***15.07.2017թ.***

Փա՜ռք հայրենիքի պաշտպաններին: Նրանց՝ ովքեր նրա անկախությունը վեր դասելով մտան ռազմադաշտ եւ արժանացան ծանր ճակատագրի՝ անհայտ հեռուներում մնալուն: Թող մի հրաշքով դարձի ճամփա բացվի նրանց համար…

***Գառնիկ Մարգարյան՝***
***Արարատի քաղաքապետի օգնական***
***22.07.2017թ.***

Այցելեցի պատերազմում անհայտ կորած զինվորների հուշաքանդարանն ու ներքուստ ցնցված եմ: Ամեն կողմից ինձ են նայում տղաները՝ իրենց հաստատակամ հայացքներով, որոնք կարծես թե ասում են՝ ի՞նչ հող զիջելու մասին են մեկ-մեկ բարբառում հոգով թույլերը, ո՞չ մի թիզ՝ թշնամուն, մենք այստե՛ղ ենք, չհամարձակվե՞ք…

***Խսկուհի Դալլաքյան***
***Երևանի Սիամանթոյի անվան***
***դպրոցի փոխտնօրեն***
***24.07.2017թ.***

Պարտավոր ենք ձեզ միշտ հիշել, տղաներ: Եվ թանգարանն ստեղծողներին՝ նույնպես:

***Մանկավարժների միջն. դպրոցի մանկավարժական կոլեկտիվ ու բարձր դասարանցիներ (33 հոգի)***
***24.07.2017թ.***

Պատիվ ձեզ, մեր հայ զինվորներ: Խոնարհվում ենք ձեր առջեւ…Ձեր հիշատակն անմահ է:

***Սեդա, Կարո, Առաքել, Քլար, Թալին, Թադե, Թենի Կարապետյաններ***
***28.07.2017թ.***

Вечная память героям Карабахской войны! Мы всегда будем благодарны им за то, что они сделали для своей земли, своего народа. И пусть ни одна война боле не придет на эту страну!

***Андрей Агаджанян***
***Елена Калогова***

Հավերժ փառք հայրենիքի ազատության համար զոհված եւ անհայտ կորած ազատամարտիկներին, նրանք մնում են ապրողներիս սրտերում եւ հայոց պատմության ոսկե էջերում…

***Ֆելիքս Պողոսյան, ազատամարտիկ***
***29.07.2017թ.***

Ես եկել եմ վերակենդանացնելու իմ հիշատակները… 23 տարի առաջ սրտիս կեսը թողել էի այստեղ եւ անկեղծ ահա եկել եմ, որովհետեւ այդ տարիներն ապրել եմ էս հողի եւ իմ զոհված ու կորած ընկերների շնչով: 1994 թ. այստեղ էի ու կասեմ՝ երանի՜ այն մարդուն, ով ապրում է նպատակի համար, ով միշտ պայքարում է, ինձ համար դա՛ է կենդանի մարդը… Արցախը հրա՜շք է, թանկ նվեր՝ Աստծո տված, իսկ Աստծո նվերն ինչպե՞ս կարելի է չսիրել…

***Վահան Տեմիրճեան***

Ցավը մեծ է, բայց եւ փոքր չէ ուրախությունը մեր տարած հաղթանակի…Երդվել ու երդվում եմ շարունակել մեր եղբայրների Սուրբ գործը: Կպահե՛նք քրիստոնյայի մեր հավատքը, մեր ազգային արժեքները, կհասնենք մեր բաղձալի նպատակին:

***Սեւակ Հակոբի Տիմիրճեան***

Հույսը մնայուն է՝ քանի դեռ հիշում ենք… հույսը կարող է ապրեցնել բոլորիս: Ապրե՛ք, արցախցիներ, որ մեզ կյանք եք տալիս: Անպայման կհանդիպենք…

***Արփի եւ Վարուժան***
***093946907***
***16.07.2017թ.***

Հայաստանի Արցախ աշխարհի անկախության համար զոհված,անհայտ կորած ազատամարտիկներին փառք ու պատիվ, նրանց ծնողներին, հարազատներին՝ երկրի վրա ու երկնքում համբերություն: Հայոց աշխարհը թող գոյատեւի հավերժ: Սպասում ենք ծանր բախտի արժանացած մեր ազատամարտիկ տղաների վերադարձին՝ անհայտ հեռուներից…

***Ազատամարտիկ Սպարտակ Դաղոյան՝***
***Գավառ քաղաքից***
***22.07. 2017թ.***

Անհայտ կորածների ճակատագրի բացահայտում, նրանց վերադարձ հայրենիք. այս է խնդիրը... Մեր աղոթքները թող օգնեն դրա ի կատար ածվելուն:

***Գավառի ԵԿՄ տարածքային բաժանմունքի նախագահ, գեներալ-մայոր Աշոտ Գասպարյան***
***22.07.2017թ.***


2/8/2017
È molto impressionante questo museo. Spero vivamente che i figli di questi genitori tornino presto. Caterina, Luciano, Silvia, Agata e Sergio.

Այստեղ մեր հոգին պարուրվեց և՛ տխրությամբ, և՛ հպարտությամբ. այս թանգարանն ստեղծողն ուժեղ կին է եւ սիրող մայր: Ապրեք երկա՛ր, տիկին Վերա, եւ թող բախտը վերջապես ժպտա Ձեզ ու ձեր բախտակիցներին. թող վերադառնա՜ն տղաները…

***Հայկանդուխտ եւ***
***Հայաստան Հակոբյաններ***

Դուք բացեցիք մեր հոգու աչքերը դեպի արժանապատիվ ապագա: Մենք հայրենիքի նվիրյալ զինվորը կդառնանք:

***Ստեփանակերտի Ք. Իվանյանի անվան***
***ռազմամարզական վարժարանի 53 սան***

Երբ առաջին անգամ ոտք դրի այս թանգարան, անբացատրելի զգացում ապրեցի…Շնորհակալ եղա ինքս ինձնից, որ ռազմական մասնագիտություն եմ ընտրել: Մեր պապերի, հայրերի, ավագ եղբայրների գործը սրբությամբ ենք շարունակելու:

***Գոռ Մարտիրոսյան***
***Թ.Իվանյանի անվան ՌՄՎ սան***

Շնորհակալություն այս հայրենանվեր աշխատանքի համար, որ կատարել է Վերա Գրիգորյանն իր բախտակիցների հետ միասին: Նման օջախները կարեւոր են հայի պատմական հիշողության պահպանման եւ այն սերնդեսերունդ փոխանցելու առումով:

***Ռուզաննա Անտոնյան՝***
***Երեւանից ժամանած 15 հոգու անունից***

Ոչ-ոք չի մոռացվել՝ ոչինչ չի մոռացվել…Աստված էլ ի վերջո մեր ժողովրդի հետ է լինում…Դրանում բազմիցս ենք համոզվել:

***Անի Խ.***

Կը հավատանք, որ վաղ թե ուշ անհայտ կորածները կվերադառնան հայրենիք:
Աղոթում ենք նրանց համար:

***Անի Նաճարյան***
***8.09.2017թ.***

Աստված լուսավորի զոհվածների հոգիները եւ տուն վերադարձնի անհայտ կորածներին:

***Գ.***

Հերոսները չեն մահանում, նրանք ապրում են մեր հիշողության մեջ:

***Էթերի Բաղրյան***
***14.09.2017թ.***

Հուսամ՝ մեր հայերը մեր ազատագրված հողերը հետ չեն տա: Աստված պահապան մեր զինվորներին:

***Սրբուհի***
***25.09.2017թ.***

Մեր պարծանքն եք, հայ զինվորներ…
Արցախը Հայաստանին կլինի, արդե՛ն իսկ կա…Բոլորս ձեզ հետ ենք, արցախցիներ:

***Շաղիկ Գէորգեան***
***29.07.2017թ.***

Liebe ist stärker als der Tod, die Soldaten bleiben unvergessen, möge Christus sie in sein Reich aufnehmen.

A very impressive collection and work of the association, in particular I am impressed by the common consensus that there are mothers on both sides

[signature] 14.8.2017

Главное — чтобы всегда был мир, чтобы была свобода — желаю Вам всего самого хорошего с Вашей работой!!!

[illegible]
[illegible]

16.08.2017թ.
[signature]

18/08/2017
0939469007

La memoria, pui delle guerre, è la pui grande arma contro l'occupazione e la distruzione dei popoli.

ITALIA, Giulia [illegible]

18/08/2017
A sad collection of faces.
MP.

Թավրիզից ժամանած ընտանիքներո՛վ՝ տեսանք ու լսեցինք թանգարանի տնօրենի բացատրությունները եւ շատ հուզված ենք: Մենք մեր պատմական հողերի վերադարձով պարտական ենք հայ քաջորդիներին, հաղթանակը եկել է մեծ զոհերի գնով, հասկանում ենք անհայտ կորածների վիշտը եւ մաղթում նրանց համբերություն…

***Հենրիխ Աբրահամյան***
***5 ընտանիք՝ 23 հոգով***
***29.09.2017թ.***

Պատերազմին «ոչ» ասենք եւ հուսանք, թե կարոտից լացող աչքերով մայրեր այլեւս չենք ունենա…

***Դավիթ Աբուլեան՝ ընտանիքով***
***Թեհրան***

Սա թանգարան է ոչ միայն անցյալի ու ներկայի մասին, այլեւ՝ ապագայի՛ն հղված «թող այլեւս պատերազմ չլինի» կարգախոսով: Պատերազմը հերոսությունների դաշտ է, բայց եւ՝ զոհերի ու կորուստների դաշտ: Մեր քաջորդիները չխնայեցին իրենց կյանքն ու ջահելությունը հանուն հայրենիքի, փա՜ռք նրանց, եկեք արժանի լինենք նրանց սուրբ գործին:

***Ա. Թովմասյան***
***30.09.2017թ.***

Հերթական այցելությունս է այս թանգարան, եւ նորից զարմանում եմ, թե ինչքան ուժ, եռանդ ու աշխատասիրություն ունի մեր հարգարժան Վերա Գրիգորյանը, մարդ՝ ով մշտապես եւ անմնացորդ կանգնած է հայ զինվորի կողքին:

***Մուրադ Շահրամանյան***
***10.10.2017թ.***


愿你们找到国家的方向

李 LiDi
China
2017.10.7

Very impressive place.
God help you to find your
fellows and friends.
Gustavo from Spain
07.10.2017

Thank you for allowing us to visit and your
hospitality. We hope you find peace and
answers to your questions. Keep the memory alive.
11-10-2017 - Joanna from Greece

Very beautiful museum who gives us a bright
look on the history of Nagorno Karabach.
Keep up the good work and let peace overrule
everything - All the best from Belgium! 12-10-2017

Առաջին անգամ եմ այցելում Անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարան ու հիացած եմ: Այո՝ տխրության հետ մեկտեղ հիացմունքի զգացում կա հոգումս, որովհետեւ պատկերացնում եմ այն մեծ ջանքերը, որոնց շնորհիվ այսօր ունենք հիշատակի այսպիսի ինքնատիպ օջախ: Շնորհակա-

լությունս եմ ուզում հայտնել Վերա Գրիգորյանին՝ այն ստեղծելու համար: Փորձելու եմ ամեն ինչ անել, որպեսզի ես էլ դառնամ երկրիս համար պիտանի մարդ:

***Ինեսա Վարդանյան***
***11-րդ դասարանցի***
***17.10.2017թ.***


Jesteśmy pod bardzo dużym wrażeniem cierpień jakie niesie wojna dla wszystkich a przede wszystkim matek, które tracą swoje dzieci.
To bardzo ważne, że powstało takie muzeum, bo nie można zapomnieć i o tych co zginęli i o tych, którzy po nich płaczą.
Joanna i Krzysztof z Polski, 17. 10. 2017r.

ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետի «կենսաբանություն եւ աշխարհագրություն» բաժնի առաջին կուրսի ուսանողներս տպավորված ենք այն ամենով, ինչ տեսանք ու լսեցինք այստեղ՝ Անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարանում: Պատերազմում մինեկ որդի կորցրած Վերա Գրիգորյանը ժամանակին ստեղծեց այս ամենը, որպեսզի օգնած լինի իր բախտակիցներին, իսկ առաջին հերթին՝ որպեսզի հասարակությունը հիշի իր հայրենասեր, բայց անհայտ ճակատագրի արժանացած զավակներին:

Մի ամբողջ ազգ է սպասում նրանց…

***25 ուսանող***
***18.10.2017թ.***

Նայելով ձեր լուսանկարներին, շատ եմ ափսոսում, որ չկարողացանք օգնել ձեզ՝ վերադառնայիք հարազատների գիրկը… Բայց դուք միշտ մեզ հետ եք, հավատացեք, ապրում եք մեր հիշողության մեջ: Եվ ինչպե՞ս կարող ենք չհիշել, երբ հանուն մեր հողի եւ ազատության մարտնչել ենք միասին:

***Շուշիի շրջվարչակազմի***
***ղեկավար Վ. Կաայան***
***23.10.2017թ.***


一幅幅照片拼出一个个画面。历史沥沥在目。刻骨铭心。从来一个博物馆如此深刻地吸引我。也许由心感慨，世事变迁，而此刻身为中国人，远道而来，心中不免有些伤感。世界和平难实现。但我坚信有一天会实现！愿活着的我们珍惜和平的年代！

李露. China

26.10.2017

Ռտք դնելով այս թանգարան, զգացի մեր հերոս եղբայրների շունչն ու ոգին…Նրանք, անշուշտ, գիտեին, որ պատերազմում ամեն ինչ է հնարավոր, այդ թվում՝ եւ իրենց բաժին ընկած ծանր ճակատագիրը, բայց անվարան, շատերը՝ նաեւ կամավոր, ընտրեցին հայրենիքի զինվորի առաքելությունը, կռվեցին տարբեր ճակատներում՝ մոտեցնելով հաղթանակի օրը:

Մենք ձեզ սպասում ենք, տղերք: Սպասում ենք ու կսպասենք՝ ի հեճուկս անցնող ժամանակի:

***Ձեր ազատագրած երկրի***
***մի փոքրիկ մասնիկ՝ Մարիամ***
***26.10.2017թ.***

Այստեղ ամեն մի լուսանկար, ամեն մի ցուցանմուշ իր պատմությունն ու խորհուրդն ունի: Հաղորդակցվելով դրանց պատմությանը , կոնկրետ ես ներքուստ փշաքաղվում եմ, բայց եւ լցվում շնորհակալության զգացումով՝ այս տղաների արած-քղածի համար: Ի՞նչ արած, պատերազմը ճակատագրեր է փշրում, անբուժելի վերքեր հասցնում մարդկանց…Անհայտ կորած ազատամարտիկ Սպարտակ Գրիգորյանի մայր ու նա-եւ այս թանգարանն ստեղծած. ԱԿԱՀՄ նախագահ Վերա Գրիգորյանի կատարածն անգնահատելի է…

Վերադարձե՜ք, մենք սպասում ենք ձեզ:

***ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի***
***առաջին կուրսի 28ուսանող***
***26.10.2017թ.***

Կուրսղեկ Զինաիդա Բալայանի հետ եկանք այստեղ եւ համարյա շոշափելիորեն զգացինք այն ցավը, որ ավելի քան քառորդ դար իրենց հոգում կրում են մեր անհայտ կորած ազատամարտիկների հարազատները…Շրջեցինք թանգարանում՝ տպավորությունները շա՜տ են ու բազմապիսի: Նայելով տղաների լուսանկարներին, հանդիպելով նրանց հայացքներին, ափսոսանքի այրող զգացում ես ապրում առ այն, որ նրանք այսօր մեր կողքին չեն: Նրանցից յուրաքանչյուրն իր բոլոր, այդ թվում՝ եւ վերջին մարտով... մեկ քայլ ե՛ւս ավելի է մոտեցրել հաղթանակը:

***Ինեսա Առաքամյան***
***ԱրՊՀ բանասիրականի***
***առաջին կուրսի ուսանողուհի***

Ամուր հավատով-անբեկանելի պահանջով սպասում ենք ձեզ, մեր սիրելի հայորդիներ, ծանր ճակատագրով մեր քաջեր: Ոգով ամուր մնացեք ձեր անհայտ հեռուներում, մտքով ու հոգով՝ թեժ կետ մնացող Արցախի հետ, մե՛զ հետ, ընդառաջ՝ մեր սիրուն ու մտքին, որոնք ուժ են տալիս հիշողությանը մեր՝ առ ձեզ: Այս այցին իմացանք, որ ԱԿԱՀՄ նախագահ եւ թանգարանի հիմնադիր Վերա Գրիգորյանի անհայտ կորած ազատամարտիկ որդու՝ Սպարտակ Գրիգորյանի ծննդյան օրն է. բոլորում է նրա կյանքի 45-րդ տարին, շնորհավորում եմ ՕՐԴ, Սպարտակ ջան, եւ կրկնում՝ սպասում ենք քո եւ մյուսների վերադարձին:

***Զինաիդա Բալայան***
***ԱրՊՀ դոցենտ, բանասիրական***
***գիտությունների թեկնածու,***
***բանաստեղծուհի***

Ամեն անգամ Արցախ այցելելիս պարտադիր գալիս եմ նաեւ այս թանգարանը: Տիկին Վերան անգնահատելի աշխատանք է իրականացնում՝ միատեղելով փաստերն Արցախյան պատեազմի մասին: Այս թանգարանն այն վայրն է, ուր պետք է գալ պատասխանատվության խոր զգացումով: Հայրենիքը սիրող յուրաքանչյուրը պետք է լավ ճանաչի այս թանգարանի յուրաքանչյուր անկյունը: Ուզում եմ, որ այստեղ այլեւս հերոսների համալրում չկատարվի…

***Հովհաննես Վարդանյան***
***28.10.2017թ.***

Ես զինվոր ու հրամանատար եղած լինելով՝ գերազանց եմ գիտակցում այս թանգարանի պատերին ամրացված լուսանկարներից մեզ՝ այցելուներիս նայող տղաներից յուրաքանչյուրի էությունն ու նվիրումը: Այս տղաները չեն վարանել նետ-

վել առաջ, երբ արձակվել է գրոհի հրամանը, իմանալով, որ գնում են ոչ միայն հաղթանակին ընդառաջ, այլեւ հնարավոր է՝ մահվանը: Պատերազմում, սակայն, կա մահից էլ ահավորը՝ գերությունը, ամենադաժան անակնկալը մարդու համար, որովհետեւ դա նշանակում է փորձության մի ուղի՜շ ու անվերջանալի շղթա, ֆիզիկական ու բարոյական կտտանքներ…Խոնարհվում ենք ձեր առջեւ, մեր զինակից տղաներ, ձեր հոգեկան ամրությա՛ն առջեւ, քանզի ձեզնից ոչ-ոք թշնամու ձեռքը չտվեց հայ զինվորի անունն արատավորող ոչ մի փաստ, այլապես նա այն իսկույն կօգտագործեր մեր դեմ…

***Ռոման Բալայան***
***ՀՀ «Ղարաբաղյան պատերազմի վետերանների» նախագահի տեղակալ, Արցախի մասնաճյուղի նախագահ***
***28.10.2017***

Շնորհակալություն Վերա Գրիգորյանին՝ իր կատարած հայրենանվեր աշխատանքի համար: Դժվար է նայել պատերազմում որդի կորցրած, այն էլ՝ անհայտ ճակատագրով (եւ ըստ այդմ՝ նրա վերադարձին ավելի քան քառորդ դար սպասող) մոր աչքերին, բայց ահա ինքն՝ այդ մայրը, այնքան բաց ու մտերմիկ հայացքով է նայում քեզ՝ հուշաթանգարան այցելածիդ, որ անկեղծ երախտագիտություն ես զգում նրա հանդեպ: Թանգարանի հարուստ ցուցանմուշներն են վշտախոս վկայում նրա թափած ջանքերի մասին… Թող Աստված բացի բոլոր փակ դռները եւ 250 անհայտ կորած մեր ազատամարտիկների, ինչպես նաեւ ընդհանրապես բոլոր անհայտ կորածների, վերադարձի կենարար լույսը պարգեւի հարազատների ցաված սրտերին:

***Մարիա Խաչատրյան***
***Ստեփանակերտի Մուրացանի անվան գրադարանի տնօրեն***
***8.11.2017թ.***

Եթե ցանկացած թանգարան յուրօրինակ սրբատան է նման, ապա ԱՀ Անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարանն, ըստ իս, այդպիսին է կրկնակի: Թող լույս բացվի մեր այս տղաների համար, ում հետ բախտն ամենադաժան խաղը խաղաց հերթական, իրականում՝ վերջին, մարտում... Թող բացվեն բանտերի դռները, եւ նրանք հայրենիք վերադառնան:

***Արկադի Աարյան***
***Երեւանի «Ամարաս» փպարանի փնօրեն***
***14.11.2017թ.***

Այս թանգարանում լինելով, մարդ ոչ միայն ցավ է ապրում պատերազմից չվերադարձած տղաների համար, այլեւ վրեժի եւ ատելության զգացում՝ առ մեր թշնամին: Երանի՜ թե հրաշք կատարվի, կալանավայրերից տուն դառնան մեր տառապած տղաները, սրբեն մայրերի աչքի արցունքը, ուրախությամբ լցնեն հարազատների սիրտը: Այսօր մենք շատ բան իմացանք նրանցից շատերի անցած մարտական ուղու մասին, ինչպես նաեւ՝ թե ով որ ռազմաճակատում, որտեղ է դիմավորել իր վերջին մարտը…

Խոստանում ենք մեր հողերից թիզ անգամ չզիջել անարգ թշնամուն, պահել-պահպանել մեր հայրենիքը՝ ապրելով այնտեղ, ոչ թե օտար ափերում…

Խոնարհվում ենք ձեր առջեւ, տղաներ:

***Տաթեւ Հարությունյան***
***ԱրՊՀ գրադարանային բաժնի***
***առաջին կուրսի ուսանողուհի***
***27.11.2017***

Մտածում եմ. ի՞նչ կլիներ, եթե տուն դառնային Արցախյան պատերազմի մեր բոլոր նահատակները, անհայտ կորած ազատամարտիկները, բոլորը… Ինչպիսի՜ համաժողովրդական ցնծություն կտիրեր մեր երկրում, որի գոյության ու անկախության ապահովման համար նրանք նվիրեցին իրենց կյանքն ու ջահելությունը:

Ես այնքան խո՜րն եմ զգում նրանց հարազատների, հատկապես՝ մայրերի, անվերջանալի դարձած սպասումն ու կարոտը…Թող այսուհետեւ պատերազմ չլինի ոչ իմ հայրենիքում, ոչ էլ աշխարհի որեւէ անկյունում: Յուրաքանչյուր հայի սրտում, վստահ եմ, ապրում է ու կապրի՛ մեր տղաների հիշատակը:

***Լիանա Առսպամյան***
***ԱրՊՀ լրագրության բաժնի***
***ուսանողուհի***
***29.11.2017թ.***

Առաջին անգամ եմ այստեղ ու դժվարանում եմ արտահայտել զգացածս, ասել ավելի շատ ցավ եմ զգում, թե հպարտություն: Հպարտություն՝ այս տղաների անցած մարտական ուղու, եւ թանգարանն ստեղծած որդեկորույս մոր հոգեկան արիության համար: Անհուն կարոտով սպասում ենք ձեզ, մեր սիրելի տղաներ:

***Անուշ Մանվելյան***
***29.11.2017թ.***

Այս թանգարանում ես մտովի տեղափոխվեցի հայոց պատմության խորքերը…Իմ ժողովուրդը ճակատագրական փորձությունների դիմակայության պակաս չի ունեցել, եւ դրանցից մեկն էլ թշնամու կողմից մեզ բռնափաթաթած Ղարաբաղյան պատերազմն էր. Մեզ համար պատերազմ՝ հանուն Արցախի

անկախության եւ ազատության, հանուն որի իրենց կյանքը զոհեցին հազարավոր հայորդիներ, ինչպես նաեւ անհայտ ճակատագրի դատապարտվեցին մեր ազատամարտիկ տղաներից ոմանք:

Մենք պարտավո՛ր ենք վառ պահել նրանց հիշատակը:

Այս թանգարանն իր ցուցանմուշներով, իր խոսուն լռությամբ հայրենասիրության հստակ լիցք է հաղորդում այցելուին:

Փա՜ռք ու պատիվ նրանց, ովքեր ծանր ու դաժան իրավիճակում սեփական կյանքից վեր դասեցին հայրենյաց փրկությունը:

***Մարինե Բալայան***
***ՏԱՄ առաջին կուրսի ուսանողուհի***
***9.12.2017թ.***

Вечная и светлая память безвести пропавшим воинам в Арцахской войне! Они героически сражались за освобождение родины от захватчиков, но, как говорится, не повезло им в последнем бою... Они отдали все для того, чтобы мы могли сейчас спокойно жить под мирным небом, на родной земле...Мы будем помнить их, они будут вечно жить в наших сердцах.

Никто не забыт, ничто не забыто. Низкий им поклон!

***13.12.2017г.***
***Без подписи***

ՎԵՐԱ ԱՐՄՈՅԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀՈՒՇԱՄԱՏՅԱՆ - 4

## *(2014-2017թթ.)*


| | |
|---|---|
| Խմբագիր՝ | Միեր Հարությունյան |
| Սրբագրիչ՝ | Իրենա Մարտիրոսյան |
| Համակարգչային շարվածքը՝ | Լուսինե Մարտիրոսյան |
| Էջադրումը՝ | Ժաննա Ավանեսյանի |
| Կազմի ձեւավորումը՝ | Մարինե Սայիյանի |

Թուղթը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84 1/16:
Ծավալը՝ 11 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 250

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
Ստեփանակերտ, Հ. Հակոբյան, 25